AZG NEW SHABAT 1.QXD 03/05/2017 22:03 Page 1

Ազգ
Azg
5 ՄԱՅԻՍ 2017 ՈՒՐԲԱԹ 17(5465)
ISSN: 1829-1651
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# Բաքվի ջանքերով փակվեց ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը

Մայիսի 4- ին ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ **Քրիստինե Մութթոնեն** ( Ավստրիա ), ինչպես նաեւ այդ կառույցի Հարավային Կովկասում հատուկ ներկայացուցիչ **Քրիստիան Վիգենինը** (Բուլղարիա) ափսոսանք են հայտնել ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի մանդատի երկարաձգման վերաբերյալ համաձայնության անհնարինության առիթով: Հարավային Կովկասում գործող միակ գրասենյակը կփակվի առաջիկա ամիսներին: Վիգենինն ընդգծել է Հայաստանի եւ ԵԱՀԿ-ի համար երեւանյան գրասենյակի կարեւորությունը, հաղորդելով, թե այդ կառույցն ակտիվ ներգրավված էր լինելու տարածաշրջանային նախաձեռնություններում: «Բաքվին կառուցողական դաշտ վերադարձնելու ԵԱՀԿ երկրների ջանքերն ապարդյուն անցան», ասել է ԱԳՆ խոսնակ **Տիգրան Բալայանը**: Փաստորեն «մեկուսացված» Ադրբեջանը ԵԱՀԿ- ում թելադրողի դերում է:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Օղակաձեւ զբոսայգու վերջին օղակը

Վաղուց չէի եղել Խանջյան, Սայաթ-Նովա, Ալեք Մանուկյան փողոցների այն հատվածում, որտեղ գտնվում է Թեքեյան կենտրոնը, այսինքն՝ երբեմնի Օղակաձեւ զբոսայգու կանաչ մնացած վերջին տարածքում, որն արդեն կանաչ չէ. ինչ-որ մի խեչո եկել-նստել է այնտեղ եւ իր «մոտ» է հրավիրում շաուրմա սիրողներին, իսկ նրան կից կպած տարածքը, հենց մայթեզրին, արդեն գոտեւորվել է չարագուշակ «Ավելի բարեկարգ Երեւան» պաստառով, որի հետեւում բանվորները արագ-արագ երկաթյա սյուներ են տնկում մեկ այլ խեչոյի կամ կողքին արդեն գործող լայնատարած «Ֆլագման» սրճարանի ծովակալի պատվերով: Սա հենց այն վայրն է, որտեղ ժամանակին փորձում էինք մայրաքաղաքի հաջորդական քաղաքապետերից արտոնություն կորզել արեւմտահայ վերջին եւ սփյուռքահայ առաջին բանաստեղծի՝ Վահան Թեքեյանի արձանը տեղադրելու համար, բայց ի զուր. ոչ մի քաղաքագլուխ չուզեց, որ Վահան Թեքեյանն ու դիմացի մայթին գլուխն ափերի մեջ առած Եղիշե Չարենցը իրար հետ խոսեն. հանճարների զրույցից «քյար» չկա...

Անշուշտ խոսքս չի վերաբերում Վանո Սիրադեղյան քաղաքապետին: Այդ հարցով նրան չէի դիմել բնավ, բայց հետը խնդիր ունեցել էի: Բանն այն էր, որ Երեւանը ղեկավարելու կոչված յուրաքանչյուր պաշտոնյա, այդ թվում նաեւ Սիրադեղյանը, պաշտոնավարության առաջին իսկ օրը «ուժը կորցրած» էր ճանաչում իր նախորդների վավերացրած հողահատկացումները: Իսկ Վանոն ամենախիստն էր այդ հարցում, եւ իրավունք ուներ– մինչեւ իր իշխանությունը, եւ իրենից հետո էլ, հատկապես «պետական գողերի» կողմից այնպես էր թալանվել մայրաքաղաքը, որ ամուր ձեռք էր պետք, որը նա հաստա՛տ ուներ, իսկ Երեւանն այդ օրերին (1996-1998 թթ.) կատակով կոչվում էր «ԵրեՎանո»... Ինչեւէ: Թեքեյան կենտրոնը, որն այդ ժամանակ սփյուռքահայ մեր բարերարների նվիրատվությունների միջոցով վերակառուցվում էր մեծ թափով, հայտնվել էր Սիրադեղյանի «սեւ ցուցակում»: Գնացի մոտը՝ խնդիրը հասկանալու: Նա երկու՝ շատ խիստ պայման դրեց առաջս, երկուսն էլ՝ սրտիս մոտիկ. շենքը արտաքնապես պետք է հարազատ մնա նախկին «Կռունկ» ճաշարանին, որտեղ ինքը եւ մենք անցկացրել էինք մեր երիտասարդության շատ պահեր, եւ երկրորդ՝ Թեքեյան կենտրոնը բնավ պետք չէ դառնա սննդի օբյեկտ: Երկուսն էլ ընդունելի պայմաններ: Եվ մեկ տարի անց, 1997 թ.ին, քաղաքապետ Վանո Սիրադեղյանն անձամբ եկավ շենքի բացմանը եւ մրցանակ էլ շնորհեց տարվա լավագույն վերակառուցման համար:

Հիմա չգիտեմ՝ արդեն շուրջ 18 տարուց ի վեր վտարանդի դարձած նախկին քաղաքապետը երբեւիցե եկե՞լ է Երեւան, այցելե՞լ է իր եւ մեր բոլորի ամենասիրած վայրերից Օղակաձեւ զբոսայգի, որտեղ հիմա արդեն զբոսնելու որեւէ տեղ չի մնացել: Բետոն, երկաթ, քար, սալիկ եւ ասֆալտ է ամեն կողմ, խժռել են բոլոր կանաչ տարածքները, իսկ այստեղ-այնտեղ մնացած ծառերը կանգնած են զարմացած՝ չգիտեն ինչո՞ւ են կանգուն մնացել, դեռ: Բայց ամենազարմացածը՝ սրճարանների եւ սննդի օբյեկտների արանքում մնացած Արմեն Տիգրանյանն է, արձանը նկատի ունեմ: Այգի կոչվածի երկայնքով ու լայնքով իրար հրմշտկում են, սկսած «Ֆլագմանից» եւ «Խեչոյի շաուրմայից», «Պալմիրա Բիր հաուս» գարեջրատունը (անպայման անգլերեն՝ օտարներին ու մեր չտեսներին զարմացնելու համար երեւի), «Մամա-միան», «Բոմբ կլաբը», «Շոու կլաբ» կոչված անճոռնի ապակեկառույցը, «Ֆեշըն կլաբը», Գ. Ծառուկյանի զանգվածեղ SPA կենտրոնը, որը չգիտես անգլերեն ո՛ր բառարանից գտնված Wellhealth (ճիշտը կլիներ՝ goodhealth) Center է կոչվում, «Ջրաղացը», ոչ ավել-ոչ պակաս «Էլ Գրեկոն», որն ավելի տափակ է, քան երկարավուն, «Բացատը», «Կարասը», նրա կողքին, դարձյալ «Ավելի բարեկարգ Երեւան» պաստառի հետեւում բարձրացող հսկա շինարարությունը:

Այգի կոչվածի մեկ անկյունում, մայթին մոտիկ, նկատեցի հայտարարությունների դատարկ մնացած մի պաստառ, վրան՝ մանր տառերով մի գրություն՝ «Երեւանի ավագանու ընտրություններ. Քարոզչական անվճար պաստառ», բայց տակը չկար քաղաքապետի այժմյան թեկնածուներից եւ ոչ մեկի նկարը կամ գրությունը: Անվճարը երեւի ոչ ոքի պետք չէ, ո՛չ «ավելի բարեկարգ» Տարոն Մարգարյանին, ո՛չ մեծախոսիկ ու ճարպիկ (կարծեմ ռուսերեն «շուստրի» բառն այստեղ ավելի հարմար է) Նիկոլ Փաշինյանին եւ ոչ էլ ճղճղան Զարուհի Փոստանջյանին: Ամաչո՞ւմ են գուցե հենց ա՛յդ այգում գովազդ տեղադրելուց: Չէ՞ որ նրանց նախընտրական ծրագրերում որեւէ խոստում չկա Երեւանի կանաչ տարածքները չխժռելու, այլե՛ւս չխժռելու մասին:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Ինտրիգներ՝ ուղղված մոտիկ ապագային

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Կարծում էիք՝ ռեյթինգային կարգի պատճառած ողջ ամոթն ընտրություններով ավարտվե՞ց: Ինչ եղավ՝ անցա՞վ, ու ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունները «լավագույն ընտրություններ» անվանելով՝ ամեն ինչ մոռացվե՞ց: Այդպես համարողները հազիվ թե ըմբռնեին, որ ընտրական ինստիտուտի այս կարգի գռեհկացումը չէր կարող նմանատիպ այլ փոխակերպումներ չունենալ հետագայում էլ, եւ դեռ ունենալու է: Ռեյթինգային կարգի կիրառմամբ համամասնական ընտրությունների գաղափարը արժեզրկելը երեւի քիչ համարվեց, պետք էր դեռ ընտրությունների բուն էությունը խեղաթյուրել, դա էլ վերջին սկանդալով արվեց: Քանի որ՝ ինչ արդյունք որ գրանցվել էր այդ «լավագույն» ընտրություններում, ու անկախ այն բանից, թե ինչ ռեսուրսերի գործադրմամբ դա տեղի ունեցավ, դեռ պետք էր դա էլ գետնաքարշ անել՝ մի քանի անձանցով ու անկախ ընտրողի քվեից որոշելով, թե ո՞վ կգնա խորհրդարան, ով՝ ոչ:

Սա տրագիկոմեդիա է, քաջություն ունենանք՝ խոստովանենք վերջապես: Մի կողմից կարելի էր մատների արանքով նայել այդպիսի գործընթացի հակաօրինականությանը, մտածելով, որ նայելով ռեյթինգայինների հավաքական արդյունքին՝ որոշողները սարսափել են, թե էս որքան անվանարկված մարդկանց են տանում խորհրդարան, ու որոշել են սրբագրել այդ արդյունքները:

Այդպես, փաստորեն, խորհրդարան անցնող երկու հիմնական ուժերում՝ ՀՀԿ-ում եւ «Ծառուկյան» դաշինքում մեկ ամիս սրբագրում էին, տալիս-առնում՝ ով գնա, ով չգնա խորհրդարան, ընտրողի քվեի հերն էլ անիծած: Բայց վերջին օրերին տեղի ունեցածը, երբ «Ծառուկյան» դաշինքի մեկ տասնյակից ավելի թեկնածուները դիմումներ գրեցին , որ չեն հրաժարվում իրենց մանդատներից, թեեւ իրենց անունից ինքնաբացարկի դիմումներ կային ԿԸՀ-ում, մեկ անգամ եւս մերկացրեց մերկին՝ որ ընտրությունները ու ընտրողի կամքը Հայաստանում զրո են, ու մեկ, լավագույն դեպքում մի քանի մարդ է որոշում՝ ո՞վ գնա խորհրդարան ( ի դեպ, նույնը տեղի է ունենում ՀՀԿ-ի ներսում, ուր նույնպես կան այնպիսի ինքնաբացարկներ, որոնք մտորելու տեղիք են տալիս):

Լավ, գոնե ֆորման, ֆասադը պահեիք ու լրիվ չանվանարկեիք ընտրությունների իմաստը. ժողովրդի վզին որ փաթաթում էիք ռեյթինգային կարգը, նրան ներքաշելով զանգվածային նյութաիրային հարաբերությունների մեջ, բա էլ ինչու էիք փորձում շրջանցել նաեւ ձեր մտցրած ռեյթինգայինի արձանագրած արդյունքը, հետն էլ՝ ընտրական ինստիտուտը, ընտրողին հիմարացնելով եւ հարմար մարդկանց փորձելով տանել խորհրդարան: Մի կողմից հասկանում ենք, որ հասկանում եք, թե խորհրդարան դրանց չի կարելի տանել՝ այդ է պատճառը, մյուս կողմից էլ չենք հասկանում ընտրական քվեի արժեքը վերջնականապես ոչնչացնելու մեր որոշողների մոլուցքը:

⇨8

# Ռուսաստան- Թուրքիա ձնհալը Սիրիայի շրջաններն է ողողելու՝ արյունո՞վ

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Գերմանական լրատվամիջոցներն ըմբռնելի զգայուն էին լուսաբանում մայիսի 3- ին Սոչիում Պուտին-Էրդողան հանդիպումը, մանավանդ որ այն հաջորդել էր Ռուսաստանի նախագահի՝ նախորդ օրը Մերկելի հետ 3, 5 ժամ տեւած առանձնազրույցին, որ մեր գերմանացի գործընկերների համոզմամբ՝ լուրջ առաջընթաց չէր գրանցել: Ռուսաստանի եւ Թուրքիայի ղեկավարների հանդիպման ջերմության վերաբերյալ այլեւս չեզոք արհեստավարժությամբ չի խոսվում՝ հեռուստառեպորտաժներում հեգնանք կա, ձայնի տոնըմատնում է, թե չեն հավատում, որ «լավագույն ընկերները», «նոր փխրուն բարեկամությունը», ինչպես ընդգծել էին տպագիր մամուլի մեր գործընկերներն իրենց վերնագրերում, երկար է տեւելու: «Սառցեշրջանի վե՞րջը» վերնագրի հարցականը բացականչական կդառնա, առայժմ հնարավոր չէ կանխորոշել, բայց մայիսի 4-ին Աստանայում կայացած Ռուսաստան- Թուրքիա- Իրան հանդիպման ու պայմանավորվածությունների արդյունքը տեսանելի կդառնա առաջիկայում, հուսանք՝ գերտերությունների արյունալի նոր բախման դաշտի չի վերածվի պատերազմից հյուծված, ընդերքի հանածոների հարստությամբ դեռ հարուստ Սիրիան: Գերմանական լրահոսն երեկ հատուկ ուշադրություն էր հատկացրել Ղազախստանի մայրաքաղաքում կայացած հանդիպմանը, որ ենթադրելի է, գումարվել էր Սոչիում կայացած բանակցությունների հիմքի վրա:

Ռուսաստանի, Իրանի եւ Թուրքիայի պատվիրակությունների ղեկավարները Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում համաձայնագիր (որոշ լրատվամիջոցների բառապաշարով՝ հուշագիր) են ստորագրել Սիրիայում հրադադար պահպանելու հարցում՝ 4 դեէսկալացիոն պաշտպանական գոտի ձեւավորելով: Սիրիական կողմի բանակցությունների ղեկավարը հայտնել է, որ Դամասկոսի կառավարությունը սատարում է նախաձեռնությանը, փոխարենը սիրիական ընդդիմության ներկայացուցիչներից մի քանիսն ի նշան բողոքի լքել են նիստերի դահլիճը, քանի որ դեմ եղել Իրանի մասնակցությանը՝ այդ երկրին մեղադրելով ռազմական գործողությունների կողմ հանդիսանալու մեջ:

⇨10




**Պայմանավորվածություն եւ պատրանք**

էջ 4





**«Մոնա Լիզա՞», թե՞ «Ջոկոնդա»**

էջ Բ



**«Սփյուռքը եւ Հայաստանը պետք է համախմբվեն...»**

էջ 9

AZG NEW SHABAT 1.QXD 03/05/2017 22:03 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Ընդվզում

Դժուարաւ կը բարձրանամ Ծիծեռնակաբերդի բարձունքը. ոտքերս կը ցաւին ու պէտք կը զգամ ճամբու կողքի նստարանին հանգստանալու: Կը դիտեմ դիմացէս անցնող մարդկային «ամազոնը», որ յամրընթաց կը մագլցի մեխակներու եւ կակաչներու գունագեղ, քալող ծաղկաստանի մը մէջ: Ուշադրութիւնս կը գրաւեն ծնողներու ձեռքէն բռնած, կամ սայլակներու մէջի երախաները: Աչքերս կը գոցեմ ու կը փորձեմ համեմատական մը ընել անցեալի բռնագաղթուածներու կարաւաններուն հետ, անոնց մէջի սայլակներու վրայ բեռցուած, իրենց մայրերուն ձեռքէն, կամ փէշէն բռնած երախաներուն. կը փորձեմ պատկերացնել...

Կոկորդս կը սեղմուի, պատկերները կը չքանան ու աչքերս կը բանամ զսպուած ցասումով ու ընդվզումով: Մէջիս վիշտն ու կսկիծը թօթափած են իրենց սգաւոր շղարշը ու վերածուած պրկուած բռունցքի, սակայն ոչ թշնամիին դէմ, այլ մե՛ր դէմ, հայերո՛ւս դէմ...

Ուղեղիս մէջ չի տեղաւորուիր, տրամաբանութիւնս չ՛ընդունիր, որ մենք այստեղ անտէր ու անօգնական, նոյնիսկ` հլու-հնազանդ, միլիոնով առաջնորդուեցանք սպանդանոց:

Կոտորածներու այնպիսի նկարագրականներ կարդացած եմ կեանքիս ընթացքին, այնքան արտամաշօրէն արցունք թափեր եմ ինծի անծանօթ, սակայն հարազատ մարդոց աննկարագրելի տանջանքներուն համար, որ այլեւս ոչինչ կ՛ուզեմ լսել այդ մասին, միայն կ՛ուզեմ մէկ բան հասկնալ. ինչո՞ւ եւ ինչպէ՞ս հասանք այդ վիճակին: Ցարդ տրուած բոլոր բացատրութիւնները չյաջողեցան համոզել զիս:

Քանի մը օր ետք, երբ առիթ ունեցայ դիտելու «Խոստումը» ֆիլմը, այս անգամ երեւակայութեամբ ես երթալու կարիք չունեցայ, տեսայ իրականութեան պատճէնը լաւագոյնս բեմադրուած ու դարձեալ միեւնոյն զգացումը ունեցայ` ընդվզեցայ ես իմ դէմս, բռնագաղթի ճամբաներուն վրայ ինկած իմ ազգականներուս դէմ. ինչո՞ւ նահատակուեցաք...

Գիտեմ որ ոչինչ կրնայիք ընել թրքական հսկայ, կազմակերպուած ու հայատեացութեամբ զինուած բանակին դէմ, սակայն կ՛ուզէի տեսնել հայ մայր մը, որ իր գիրկի երախան խլող զինուորին աչքերը կը հանէ եղունգներով... Կ՛ուզէի տեսնել նեմեսիսեան ոգիով տղամարդիկ, որոնք կը յարձակին կարաւանը հսկող ձիաւոր զինուորին վրայ ու զինք գետին տապալելէ ետք, անոր զէնքն ու ձին առած կը յարձակին յաջորդ կարաւանի ուղեկից զինուորին վրայ: Հոգ չէ, թող մեռնին, բայց գոնէ առիւծի պէս մեռած կ՛ըլլան, ոչ` ոչխարի:

Լաւ որ ֆիլմի վերջաւորութեան ընդհանուր տխուր պատկերը հակակշռող Մուսա Լերան ինքնապաշտպանութեան դրուագը կար, որ յաջողեցաւ որոշ չափով մեղմացնել իրավիճակը:

Դարերով ապրած են մեր նախնիքը օսմանեան-թրքական բռնատիրութեան տակ ու աշխատած են հաւատարիմ քաղաքացիներ ըլլալ, աննկարագրելիօրէն սատարած են Թուրքիոյ ծաղկումին բոլոր ասպարէզներուն մէջ` քաղաքական, տնտեսական, ճարտարապետական, լեզուագիտական, երաժշտական, թատերական, համայնագիտարանային, գեղարուեստական... Սակայն, խորամանկ ու քաղաքագէտ չեն եղած, չեն մտածած ՍԵՒ օրուան մասին, ինքնապաշտպանութեան մասին, նոյնիսկ ինքնապաշտպանութեան դիմողներուն դէմ կեցած են... Ու երբ եկած է այդ սեւ օրը, ոչխարի պէս քշուած են սպանդանոց: Ինչպէ՞ս չընդվզի մարդ:

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

դգդ

# Մայիսի խորհուրդը հայ ժողովրդի համար

Ճակատագրի բերումով, թե պատմական անքննելի օրինաչափությամբ ստացվել է այնպես, որ շատ բաներ մեզ մայիսին է հաջողվում, հատկապես` հաղթանակներ կռել ու, հատկապես` ճակատագրական նշանակություն ունեցող հաղթանակներ: Կարճ ասած, Մայիսը մեր հաղթանակների ամիսն է: Թե պատմական ո՞ր անկյունադարձում, հատկապես ո՞ր թվականի մայիսը եղավ այդ հաղթանակների սկիզբը, դժվար է ասել: Սովորաբար երբ խոսվում է մայիսի ու հաղթանակների մասին, անպայման շեշտվում է եռատոն բառեզրը, որում նկատի է առնվում խորհրդային ժողովուրդների հետ միասին հայ ժողովրդի 1945-ին Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած փայլուն հաղթանակի, Շուշիի ազատագրմանն ու Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձները: Դա ճիշտ է, եթե նկատի առնվի միայն մայիսի 9-ի խորհուրդը: Սակայն ինքնին հասկանալի է, որ մայիսը միայն 9-ը չէ, իսկ այդ պարագայում արդեն եռատոնը խիստ նեղ է դառնում եւ հանգիստ այն կարելի է քառատոն, հնգատոն ու ավելի քանակի տոների ամիս համարել:

Ենթադրելի է, որ հայ ժովովրդի հազարամյակների բազմաշերտ պատմության էջերն ուշադիր թերթելու դեպքում մայիսին տեղի ունեցած շատ նշանավոր իրադարձություններ ու հաղթանակներ կարելի է գտնել: Սակայն հստակ է, որ ազատագրական եւ բարոյա-հոգեբանական ամենահայտնի հաղթական մայիսների մեր շքահանդեսն սկսվում է Ավարայրով: 1566 տարի առաջ, Ավարայրի դաշտում 451 թվականի մայիսի 26-ին, ատյամբ հայկական ուժերի եւ պարսկական բանակի միջեւ տեղի ունեցած ճակատամարտով, որը Սասանյան Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բարձրակետն էր:

Մայիսյան հաղթանակների շարքում առանձնանում է նաեւ 1915 թ. Վանի հերոսամարտն ընդդեմ թուրքական ցեղասպանների, որն ավարտվեց մայիսի 16-ին: Սկսված աշխարհամարտի Կովկասյան ճակատում պարտություն կրած թուրքական զորքերը Վանի նահանգապետ արյունարբու Ջեւդեթ բեյի գլխավորությամբ, նրանց միացած քուրդ հրոսակախմբերը եւ մուսուլմանական խառնամբոխը, դաժանորեն սպանում էին հայերին, թալանում նրանց ունեցվածքը, ավերում հայ շեները: Վանի նահանգի մի շարք գավառներում (Շատախ, Հայոց ձոր, Արճեշ. Թիմար, Ալջավազ եւ այլն) հայերը կազմակերպեցին ինքնապաշտպանություն` համառ մարտեր մղելով թշնամու դեմ: Ամենաերկարատեւն ու արդյունավետը եղավ Վանի հերոսամարտը: Այն ղեկավարում էր Վասպուրականի հայ ինքնապաշտպանության մարմինը, որի անդամներն էին Արամ Մանուկյանը, Արմենակ Եկարյանը, Գաբրիել Սեմերջյանը, Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Հրանտ Գալիկյանը եւ Փանոս Թերլեմեզյանը: Արհավիրքի դեմ հանդիման միավորվեցին հայ քաղաքական բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները:

Տղամարդկանց հետ հավասար մարտնչեցին նաեւ հայ կանայք: Մայիսի սկզբին ռուսական բանակի եւ հայ կամավորական ջոկատների առաջխաղացումը հարկադրեց թուրքական հրամանատարությանը դադարեցնել Վանի պաշարումը եւ հեռանալ: Մոտ մեկ ամիս տեւած մարտերի ընթացքում սպանվեցին 1000-ից ավելի թուրքեր (մուսուլմանական ամբոխի կորուստը չհաշված), հայերի կորուստը կազմել է մոտ 350 խաղաղ բնակիչ (կանայք, երեխաներ, ծերունիներ) եւ մարտիկներ:

1915-ի ապրիլի 7-ից մինչեւ մայիսի 6-ը տեւած Վանի հերոսական ինքնապաշտպանությունը հայ ազգային-ազատագրական պայքարի փառավոր էջերից է: Այն 150 հազարից ավելի հայերի հնարավորություն տվեց փրկվել անխուսափելի ոչնչացումից, ինչպես նաեւ օրինակ ծառայեց մյուս վայրերի հայերի համար:

Հայ ժողովրդի համար հաջորդ փառահեղ հաղթանակները կարողացանք տանել 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ընթացքում: Եթե Ավարայրն իր բնույթով ճակատամարտ էր հանուն ազատության եւ կրոնի, ապա մայիսյան հերոսամարտերը` Սարդարապատի (մայիսի 21-29), Բաշ Ապարանի (մայիսի 23-29), Ղարաքիլիսայի (մայիսի 24-28)` հանուն ինքնապաշտպանության ու գոյատեւման: Եթե Ավարայրով մենք կարողացանք պահպանել մեր ազգային-կրոնական ինքնությունը, ապա այդ հաղթական ճակատամարտերով ձախողեցինք հայերին վերջնականապես բնաջնջելու երիտթուրքական ծրագիրը եւ վերականգնեցինք հայկական պետականությունը:

Մայիսյան հաղթարշավի մյուս հանգրվանը Հայրենական մեծ պատերազմում տարած փառահեղ հաղթանակն էր: Պատերազմին մասնակցել է 600 հազար հայ, որից 300 հազարը Խորհրդային Հայաստանից է զորակոչվել, 200 հազարը` ԽՍՀՄ մյուս հանրապետություններից, 100 հազարն էլ սփյուռքից: Այդ ցուցանիշներն այլ ազգերի հետ համեմատելիս հստակ երեւում է, որ հայ ժողովուրդն ու Հայաստանը շատ ծանրակշիռ ավանդ են ունեցել հաղթանակի գործում, եւ այս պատերազմը միանշանակ եղել է հայրենական, որովհետեւ կար Թուրքիայի հանգամանքը, որն իր 26 դիվիզիաներով հայկական սահմանների վրա սպասում էր` եթե ընկնեին Ստալինգրադն ու Մոսկվան, հարձակվի Հայաստանի վրա:

Ամեն տարի մայիսին հայ ժողովուրդը նշում է իր համար ճակատագրական մեկ այլ հաղթանակի օր` Արցախի հնագույն մայրաքաղաք Շուշիի ազատագրման օրը, որը բեկումնային դարձավ ղարաբաղյան պատերազմում եւ նախանշեց հետագա հաղթանակների ուղին: 1992թ. մայիսի 8-9-ին իրականացվեց հայ ազատագրական պայքարի ամենափայլուն գործողություններից մեկը` Արցախի հնագույն մայրաքաղաք Շուշիի ազատագրումը: Մինչ այսօր տարբեր երկրների բարձրաստիճան զինվորականներ ու մասնագետներ դեռ հիացմունքով են նշում, թե ինչպես հայկական զինուժը կարողացավ 2 օր գրոհելով` ազատագրել անառիկ բերդաքաղաքը, որը 3 կողմից պաշտպանված է լեռներով ու անդունդներով:

Ռազմական գործողությանը տրվեց «Հարսանիք լեռներում» անվանումը: Գրոհելով միաժամանակ չորս ուղղություններով, հայ ազատարար մարտիկները կազմակերպված ու խիզախ վճռականությամբ Մեծ Հայրենականում մեր տարած հաղթանակի օրվանից ժամեր առաջ, մայիսի 9-ին ամբողջովին ազատագրեցին հայկական գերեվարված քաղաքը: Կյանքի կոչվեց մի օպերացիա, որն իր նմանը չուներ ռազմարվեստի պատմության մեջ: Մայիսի 9-ը կրկնակի խորհուրդ ձեռք բերեց հայերի համար: Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի խորհրդին 1992թ.-ին գումարվեց նաեւ Արցախի բերդաքաղաք Շուշիի ազատագրման խորհուրդը:



Շուշիի ազատագրումը, որը հնարավոր դարձավ շնորհիվ մեր միասնական ուժի եւ հայի հույսը միայն իր վրա դնելու, հայոց պատմության ամենափառապանծ հաղթանակներից մեկն է: Այն դարձավ հիրավի հաղթանակի օր, հաղթության տոն: Հայ մարտիկների մեծ ու նվիրական սխրանքը դարձավ եւս մեկ հերոսական պատմություն, իսկ այդ օրը եկավ լրացնելու պետական փառապանծ տոների ցանկը:

Հերոսական անցյալի տարբեր դրվագները խորհրդանշող այս տարեթվերի մեկտեղումը մեկ տոնի մեջ ոչ միայն ապահովում է հայրենիքի պաշտպանությանը մասնակցած միանգամից մի քանի սերունդների գործի ժառանգորդությունը, այլեւ երկրի անվտանգության առումով ուսուցողական մեծ արժեք ունի: Սրանով Ավարայրի, Հայրենականի եւ Ղարաբաղյան պատերազմներում հաղթանակած սերունդները իրենց յուրահատուկ էստաֆետն են փոխանցում ներկայումս ՀՀ պաշտպանության բանակում ծառայող երիտասարդներին: Եվ նման ժառանգորդությունը այսօր էլ բովանդակում է ոչ միայն ազգային, այլեւ համամարդկային բաղադրիչ, քանզի ֆաշիզմի դեմ միասնության խնդիրը չի սահմանափակվում Երկրորդ աշխարհամարտում ջախջախված` նրա գերմանական տարատեսակի դեմ պայքարի արդեն պատմության զիրկն անցած առաջադրանքով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Չորս տարի առաջ բացեցինք մեր երկիրը թշնամի երկրներից ներմուծվող գյուղմթերքի առջեւ

## *Ադրբեջանական խնձորների առնչությամբ չբարձրացված հարցադրումները*

Հայաստանում ադրբեջանական խնձորների ապօրինի ներմուծման եւ վաճառքի մասին շատ խոսվեց, բայց հիմնական հարցադրումները չարվեցին: Մասնավորապես, ինչպե՞ս եղավ, որ հայ մարդիկ, ՀՀ քաղաքացիներ, առանց որեւէ խղճի խայթի եւ ազգային գիտակցության թշնամի երկրի արտադրանքը ներմուծեցին Հայաստան, իսկ մյուսներն էլ՝ կաշառք ստացան եւ թույլ տվեցին դա անել: Այդքան շուտ մոռացա՞նք ապրիլյան պատերազմը, 90-ականների արցախյան պատերազմը, մեր զոհված եւ հաշմանդամ դարձած զինծառայողներին, նրանց թափված արյունն ու նրանց հարազատների վիշտն ու արցունքները: Կամ՝ քանի՞ օր կամ շաբաթ վաճառվեցին մեր առեւտրային կետերում ադրբեջանական խնձորները ու ինչպե՞ս դա չնկատեցինք վաճառքի հենց առաջին օրը, կամ՝ ինչո՞ւ են ոմանք, հատկապես պետական պատասխանատուներն ու սպառողների շահերի որոշ «պաշտպաններ» խնդիր համարում առաջին հերթին խնձորների ապօրինի ներմուծված լինելը, այլ ոչ թե դրանց ադրբեջանական լինելը, ավելին՝ նշում, որ ադրբեջանական լինելու պատճառով իրավունք չունենք արգելել դրանց ներմուծումը: Կամ՝ եթե Ադրբեջանը թշնամի երկիր է, ապա մի՞թե Թուրքիան բարեկամ է, որտեղից ներմուծվող թե՛ սննդամթերքի, թե՛ բազմազան այլ ապրանքների պակաս չունենք:

Ադրբեջանական խնձորները ներմուծվեցին, որովհետեւ մեզ համար վաղուց արդեն սովորական է դարձել թուրքական ապրանքներ ներմուծելն ու սպառելը, որովհետեւ ոչ բնակչությունը, ոչ պետությունը դրանց մեջ ոչ ազգային անվտանգությանը, ոչ մարդկանց առողջությանն ու կյանքին ուղղված վտանգ, ցավոք, չեն տեսնում եւ համարժեք քայլեր չեն ձեռնարկում: Ո՞րն է ադրբեջանական խնձոր ներմուծողների տրամաբանությունը՝ եթե Թուրքիայի իրականացրած ցեղասպանությունը, պատմական հայրենիքի կորուստը, դարավոր հալածանքներն ու ստորացումները «կուլ տվեցինք», ապա ինչո՞ւ չպիտի ներենք մյուս թշնամուն՝ Ադրբեջանին: Թուրքական ապրանքներ գնելը սովորական դառնալը, արեւմտյան գլոբալիստական՝ ինքնաոչնչացման տանող «տոլերանտության» քարոզները, որի դրսեւորումներից են «ադրբեջանցիներն էլ են մարդ» կամ նմանատիպ այլ հայտարարությունները, դրանց հիման վրա ոմանց՝ հատկապես երիտասարդների մի մասի մոտ ձեւավորված մտածելակերպը, մեր իրականության մեջ վահան մարտիրոսյանների եւ տիգրան խզմալյանների ի հայտ գալը՝ այս ամենին պետք է հաջորդեր այնպիսի մի բան, ինչպիսին էր ադրբեջանական խնձորների հայտնվելը Հայաստանում, եւ դա դեռ չարյաց փոքրագույնն է:

**Մինչդեռ, թե՛ իշխանությունը, թե՛ ժողովուրդը պետք է հստակ եւ միակարծիք լինեն առ այն, որ ադրբեջանական խնձորները չպետք է հայտնվեին Հայաստանում, քանի որ դրանք ադրբեջանական են՝ կարեւոր չէ օրինական են ներմուծվել, թե՞ ապօրինի, կարող են վտանգավոր լինել, թե՞ անվտանգ են:**

Ոչ ոք, այդ թվում Առեւտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) Հայաստանի Հանրապետությանը չի կարող ոչինչ ասել նման մոտեցում ունենալու համար: Ի գիտություն հատկապես սպառողների իրավունքների անգրագետ «պաշտպանների», Ադրբեջանը ԱՀԿ անդամ չէ, հետեւաբար ոչ մի պատժամիջոց այդ երկրի ապրանքների առջեւ մեր շուկան փակելու համար Հայաստանի հանդեպ չի կիրառվի: Հաջորդը՝ հայ-ադրբեջանական հակամարտությունը հայտնի է աշխարհում, եւ շատ միջազգային կազմակերպություններ զերծ են մնում որեւէ դիրքորոշում հայտնելուց, հետեւաբար՝ այստեղ նույնպես վախենալու ոչինչ չկա: Եվ վերջապես, ինչպե՞ս կարելի է ապրանք ներմուծել այն երկրից, որի հետ պատերազմում ես, այսինքն, նպաստել այդ երկրի տնտեսական զարգացմանը, որն ուղղվելու է հենց քո դեմ: Տարօրինակ է, սակայն փաստ, որ ոչ միայն չենք փորձում տրամաբանությամբ շարժվել, այլեւ անում ենք քայլեր դրան հակառակ:

Մասնավորապես, գյուղատնտեսության նախարարի 2013-ի հունիսի 7-ի հրամանով ուժը կորցրած է ճանաչվել գյուղատնտեսության նախարարի 2009 թվականի սեպտեմբերի 15-ի հրամանը՝ թուրքական եւ ադրբեջանական ծագում ունեցող կենդանական եւ բուսական հումքի ներկրումը Հայաստանի Հանրապետության տարածք արգելելու մասին: **Այսինքն, չորս տարի առաջ, փաստորեն, մեր երկիրը բացել ենք թշնամի երկրներից ներմուծվող գյուղմթերքի առաջ:** Ո՞ւմ համար էր դա արվել, ո՞ւմ շահերին էր դա համապատասխանում, կարելի է միայն ենթադրություններ անել, սակայն հայկական լրատվամիջոցներից ոչ ոք ոչ այդ որոշման, դրա հետեւանքների մասին չգրեց, ոչ ոք դրա դեմ դուրս չեկավ եւ արշավ չսկսեց սոցիալական ցանցերում կամ փողոցներում: Մեր հրապարակումը «ԱԶԳ»-ում այն ժամանակ («Հիմա էլ ադրբեջանական եւ թուրքական գյուղատնտեսությունն ենք զարգացնո՞ւմ», 24.09.2013) եզակի էր, որում ներկայացրել էինք նաեւ գյուղնախարարության պարզաբանումները, որոնք, ըստ էության, ոչինչ չէին պարզաբանում: Հետեւանքներին՝ ադրբեջանական խնձորների Հայաստանում հայտնվելու տեսքով ականատես եղանք այս օրերին, դրանք կլինեն հետագայում եւս, թուրքական ապրանքների ներմուծման ծավալներն էլ այս տարվա առաջին երեք ամիսներին անշեղորեն աճել են (դրան կանդրադառնանք առաջիկայում):

# Արդյունաբերությունն աճում է, բայց փոքր արտադրությունները գտնվում են աննպաստ վիճակում

Երկրի զարգացածության մակարդակը որոշվում է նրա արդյունաբերության զարգացման աստիճանով: Պատահական չէ «զարգացած արդյունաբերական երկիր» արտահայտությունը եւ այն, որ այդպիսիք համարվում են զարգացած արդյունաբերություն ունեցող պետությունները: Զարգացած է Հայաստանում արդյունաբերությունը, թե՞ ոչ, կարելի է եզրակացնել համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) նրա մասնաբաժնից: Այսպես՝ 2016-ին Հայաստանի Հանրապետության 5 տրլն դրամ կազմող համախառն ներքին արդյունքի, այսինքն՝ տնտեսության ամբողջ ծավալում արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 1,4 տրլն դրամ: Այսինքն, թեեւ արդյունաբերության ցուցանիշը երկրորդն է առեւտրի շրջանառության ծավալներից հետո, բայց Հայաստանը արդյունաբերական երկիր համարել դեռեւս չենք կարող: Խորհրդային տարիներին Հայաստանի արդյունաբերությունը տնտեսության գերիշխող ճյուղն էր, իսկ նրա ծավալները մի քանի տասնյակ անգամ գերազանցում էին ներկայիս ծավալները: Դրա շնորհիվ Հայաստանը իրավմամբ համարվում էր արդյունաբերական հանրապետություն:

Այդուհանդերձ, վերջին տարիներին, սկսած 2010-ից, Հայաստանի արդյունաբերությունը կայուն եւ ամբողջ տնտեսության աճի տեմպից բարձր աճ է ունեցել, ինչի արդյունքում 2010-2016-երին ճյուղն իր ծավալներն ավելացրել է գրեթե 54 տոկոսով: Սա նշանակում է, որ այդ 7 տարիներին արդյունաբերության միջին տարեկան աճը կազմել է 7,7 տոկոս: 2017-ի առաջին երեք ամիսների ցուցանիշները վկայում են, որ այդ միտումը պահպանվում է: Ավելին՝ աճի տեմպը բարձրացել է՝ հասնելով 16,2 տոկոսի: Հատկապես կարեւոր է, որ ամենամեծ տոկոսային աճը՝ 21,4 տոկոս, արձանագրվել է մշակող արդյունաբերությունում, որը թողարկում է պատրաստի (ոչ թե հումքային) արտադրանք:

Կան առանձին ապրանքատեսակներ, որտեղ հատկապես տպավորիչ ցուցանիշներ են գրանցվել թե՛ գումարային, թե՛ տոկոսային առումով: Օրինակ՝ խմիչքների արտադրության ծավալները ավելացել են 43,6 տոկոսով, այդ թվում՝ կոնյակինը՝ 2,1 անգամ, գինունը՝ 36,5 տոկոսով, ոչ ալկոհոլային խմիչքներինը՝ 30 տոկոսով: Դժվար չէ պատկերացնել, թե հատկապես կոնյակի եւ գինու արտադրությունների զարգացումը ինչպիսի կարեւոր նշանակություն ունի նաեւ գյուղատնտեսության, մասնավորապես խաղողագործության համար:

Ընդհանուր առմամբ, սննդամթերքի արտադրության ծավալներն ավելացել են 8,2 տոկոսով, կազմելով 59 մլն դոլար: Սա ամենամեծ մասնաբաժինն է մշակող արդյունաբերության 202 մլն դոլար ընդհանուր ծավալի մեջ: Մշակող արդյունաբերության մեջ երկրորդ տեղում հիմնային մետաղների արտադրությունն է՝ 41 մլն դոլար ծավալներով եւ 32,3 տոկոս աճով՝ պողպատյա խողովակների, ֆեռոմոլիբդենի, ցինկի խտանյութի, մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալների ավելացման շնորհիվ: Ծխախոտի արտադրությունն ավելացել է 4,8 տոկոսով: Այս ճյուղը երրորդն է իր ծավալներով պատրաստի արտադրանք թողարկողների մեջ՝ 32 մլն դոլար:

Կարելի է ասել աննախադեպ բարձր տեմպերով ծավալներն ավելացնում են ոսկերչական իրերի՝ 2,7 անգամ, էլեկտրական սարքավորումների՝ 3 անգամ, համակարգիչների, էլեկտրոնային եւ օպտիկական սարքավորանքի՝ 93,4 տոկոսով, արտադրությունները: Առանձին ապրանքատեսակներից էլեկտրական հաշվիչների արտադրությունն աճել է 3,8 անգամ, տրանսֆորմատորներինը՝ 3 անգամ, էլեկտրաշարժիչներինը՝ 2,9 անգամ, մետաղահատ գործիքներինը՝ 2,8 անգամ, ավտոմոբիլային մարտկոցներինը՝ 32,4 տոկոսով, մալուխներինը՝ 2,3 անգամ, իսկ օպտիկա-մեխանիկական սարքերի եւ սարքավորումների արտադրությունն ավելացել է 8 անգամ:

Այս ամենով հանդերձ, Հայաստանի արդյունաբերության ամենախոշոր ճյուղը դեռեւս շարունակում է մնալ հանքարդյունաբերությունը, որի ծավալները առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 361 մլն դոլար՝ աճելով 13,8 տոկոսով: Մետաղների միջազգային գների աճը հնարավորություն է ստեղծել մեր հանքարդյունաբերության համար ավելացնելու ինչպես հանքանյութի արդյունահանման, այնպես էլ իրացման ծավալները:

Այսպիսով, դիտարկելով արդյունաբերական արտադրանքի աճի ցուցանիշները, կարելի է եզրակացնել, որ հիմքեր կան դրա շարունակականությունն ակնկալելու համար: Արդյունաբերությունում նման զարգացումները նաեւ ներդրումային ծրագրերին պետական աջակցության քաղաքականության արդյունք են: Սակայն, եթե խոշոր ներդրումային ծրագրերին կառավարությունն իսկապես աջակցում է՝ տրամադրելով հարկերի հետաձգման արտոնություններ եւ զանազան այլ խթաններ, ապա փոքր արտադրությունները անտեսված են մնում: Հարկային դաշտը նրանց համար անհավասար եւ անարդար է մնում:

Եթե առեւտրով զբաղվողների համար շրջանառության հարկը նվազեցվում է մինչեւ 1 տոկոսի, ապա արտադրությամբ զբաղվողների համար այն կազմում է 3,5 տոկոս: Մինչդեռ, առեւտուրը չի ստեղծում ոչ մի հավելյալ արժեքը եւ հիմնված է առավելապես ներմուծման վրա: Այն խթանելու տնտեսական հիմնավորում գոյություն չունի, իսկ փոքր արտադրությունների համար եթե ոչ ավելի նպաստավոր, ապա գոնե համարժեք շրջանառության հարկի տոկոսադրույք սահմանելը նպաստավոր գործոն կլինի այս ճյուղի զարգացման համար: Այն իր հետեւից կբերի մյուս ճյուղերի, այդ թվում՝ առեւտրի զարգացմանը, որը ավելի շատ կողմնորոշված կլինի արդեն տեղական, այլ ոչ թե ներմուծվող արտադրանքի վաճառքի վրա:

**Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Նավթի գինը ցած է իջել 50 դոլար 1 բարելի դիմաց հոգեբանական շեմից

Նավթի համաշխարհային գներն (Brent տեսակի) երեկ շարունակել են նվազել եւ Երեւանի ժամանակով ժամը 17.00-ին ցած իջել հոգեբանական՝ 50 դոլար 1 բարելի դիմաց գնից: Դրանից մեկ ժամ անց, լոնդոնյան ICE Futures բորսայում Brent տեսակի նավթի գինը, տատանումներով հասել էր 49,47 դոլարի, այն դեպքում, երբ բորսայի բացման պահին գինը 50,09 դոլար է եղել մեկ բարելի դիմաց: Նույն՝ Երեւանի ժամանակով 18.00-ին, Նյու Յորքի NYMEX ապրանքային բորսայում WTI թեթեւ տեսակի նավթի գինը ընթացքում կազմել է 46,49 դոլար 1 բարելի դիմաց, իսկ առեւտրային գործարքների բացման պահին այն կազմել էր 47,60 դոլար:

Նավթի գների իջնելու պատճառը ԱՄՆ-ում նավթի առեւտրային պաշարների՝ սպասվածից ավելի քիչ նվազումն է եղել, ինչի մասին հայտարարել է այդ երկրի էներգետիկայի նախարարությունը: Ոլորտի փորձագետները կարծում են, որ շուկան մոտեցել է նավթի գների այսպես ասած «հատակին», այսինքն՝ ամենացածր կետին: Հաղորդվում է նաեւ, որ նավթի գներն այս ցուցանիշից ավելի ցածր վերջին անգամ եղել էին մարտի 22-ին:

**Ա. Ս.**

AZG NEW SHABAT 1.QXD  03/05/2017  22:03  Page 4



# Պայմանավորվածություն եւ պատրանք
## *(Collusion and Delusion)*

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

**Դետրոյթ, ԱՄՆ**

Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի նախօրյակին, մեր չսպիացած վերքին առնչվող մի շարք իրադարձություններ հաջորդեցին միմյանց. ակնկալիքը, թե ի՞նչ բառ է արտասանելու նախագահ Թրամփը, Ռոբերտ Ֆիսքի հոդվածը, որ վերստին հիշեցնում էր մարդկանց, որ 1919-ին թուրքերը ճանաչել էին (ցեղասպանության) փաստերը, Թաներ Աքչամի նոր բացահայտումը Օսմանյան բյուրոկրատիզմի կոդային համակարգի մասին, Սամանթա Փաուերի ուշացած ներողությունը, Վաշինգտոնում այդպես էլ Հայոց ցեղասպանության թանգարան չդարձած կալվածի վաճառքը եւ այդ բոլորի գագաթնակետը հանդիսացող նախագահ Էրդողանի հաշտվողական ուղերձը հայերին: Սրանք պտտահողմի արագությամբ իրար հաջորդեցին, առիթ չթողնելով անգամ հասկանալու, թե ինչը ինչոց է:




Հայերս արդեն ուժասպառ ենք եղել այս աշխարհի կեղծ բարեպաշտությունից, նախագահ Օլանդի մետասաներորդ ժամի փորձից՝ քրեականացնելու ցեղասպանության ժխտողականությունը, եւ նախագահի թեկնածու Մակրոնի ծաղկեպսակի զետեղումից:

Ինչ վերաբերում է նախագահ Թրամփի ելույթին, հայերս արդեն հույսներս կտրել էինք որեւէ դրական քայլ ակնկալելուց Սպիտակ տանից՝ հաշվի առնելով Թրամփի նախորդների դժկամությունը ընդառաջ գնալու Ցեղասպանությունը ճանաչելու մեր խնդրանքներին: Այդուհանդերձ, հույսի մի փոքր նշույլ կար: Որպես նախագահի թեկնածու Թրամփը անտեսել էր Ցեղասպանության խնդիրը եւ ոչ մի պարտավորվածություն չէր ստանձնել այդ առնչությամբ: Բայց հաշվի առնելով նրա քաղաքականության անկանխատեսելիությունը, մեզանից ոմանք հույս ունեին, որ դրական տեղաշարժ կլինի: Ավաղ, նա եւս հետեւեց իր նախորդների օրինակին:

Ավանդաբար, ամեն տարի ապրիլի 24-ի նախօրյակին թուրքական բարձրաստիճան մի պատվիրակություն այցելում է Վաշինգտոն՝ զգուշացնելու ամերիկյան վարչակարգին այն հետեւանքների մասին, որ տեղի կունենան թուրք-ամերիկյան հարաբերություններում, եթե ամերիկյան կողմը ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Այս տարի Թուրքիայի պաշտպանության նախարար Ֆիքրի Իսիքին էր հանձնարարված կատարել այդ պարտականությունը: Այցը տեւեց 24 ժամ, եւ իհարկե քննարկված օրակարգի գլխավոր հարցը Հայոց ցեղասպանության ճանաչումն էր, չնայած պաշտոնական հայտարարության մեջ նշված էր Թուրքիայի խնդրանքը, որ Ամերիկան չշարունակի պաշտպանել քրդերին Սիրիայում:

Մի այլ նուրբ ուղերձ հղելով Վաշինգտոնին, Անկարայում մեկ ուրիշ նախարար միաժամանակ հայտարարեց, որ Թուրքիան հենց նոր ավարտել էր բանակցությունները Ռուսաստանի հետ՝ գնելու գերժամանակակից հրթիռային համակարգեր այդ երկրից, եւ համաձայնությունը շուտով կկնքվեր: Շանտաժը ստիպեց Պենտագոնին լուրը հաղորդել Սպիտակ տան ղեկավարին: Փակ դռների հետեւում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Թրամփը չի օգտագործի «ցեղասպանություն» եզրույթը, իսկ Էրդողանը հանդես կգա հաշտվողական հայտարարությամբ: Սա իհարկե կրկնօրինակն էր արդեն մաշված սցենարի, համաձայն որի Սպիտակ տունը խուսափում էր ճանաչման խնդրից՝ ազդարարելով, որ համաձայնություն կա հայ-թուրքական հարաբերություններում, որն այդպես էլ չի իրականանում արդեն երկար տարիներ:

Այս տարի, առավել քան երբեւէ, այս պարտադրված խաղը կնպաստեր Էրդողանի վարչակարգին, որ միջազգային մեկուսացման եւ ներքին լարվածության պայմաններում ծանր ժամանակներ է ապրում, որպես հետեւանք վերջերս անցկացված հանրաքվեի եւ քուրդ փոքրամասնության դեմ ծավալված գազանային պատերազմի: «Ցեղասպանություն» եզրույթի օգտագործումից Վաշինգտոնի հրաժարվելը էապես կնվազեցներ Էրդողանի մտասանջությունները: Եթե Թրամփը խախտեր ավանդույթը եւ օգտագործեր այդ ճակատագրական բառը, այն անպայման կունենար «դոմինո էֆեկտ», անշրջելի մի գործընթաց, որին կհետեւեին Իսրայելն ու այլ երկրներ՝ ամբողջովին մեկուսացնելով Թուրքիային իր համառ ժխտողականությամբ:

Այսպիսով մենք ականատես ենք լինում Վաշինգտոնի եւ Անկարայի միջեւ ձեռք բերված մի պայմանավորվածության կամ գաղտնի համաձայնության, որը կարող է պատրանք առաջացնել հայկական որոշ շրջանակներում, թե Էրդողանը լուրջ մտադրություններ ունի բարելավելու հարաբերությունները Հայաստանի հետ:

Վաշինգտոնն ի վիճակի է խաղալ այս խաբուսիկ խաղը Թուրքիայի հետ, որովհետեւ արդեն չափել է Մ. Նահանգներում հայերի քաղաքական վարկն ու նշանակությունը: Պետք է խոստովանել, որ հայերս Ամերիկայում այնքան էլ քաղաքականացված համայնք չենք, որպեսզի գործի դնենք ստեպղինի եւ մահակի քաղաքականությունը: Այնպես որ կարիք ունենք մոբիլիզացնելու եւ առավելապես քաղաքականացնելու մեր հայկական համայնքը, որովհետեւ հատկապես քաղաքականության մեջ փոփոխությունները երբեք գթասրտությունից կամ պատմական արդարությունից չեն առաջանում:

Թրամփը ոչինչ չէր խոստացել հայերին, այնպես որ նա արդարանալու կարիքը չունի: Բայց բրիտանացի խիզախ լրագրող Ռոբերտ Ֆիսքը խիստ քննադատել էր նրան «Ինդիփենդենտ» օրաթերթում նույնիսկ նախքան Սպիտակ տան հաղորդագրության հրապարակումը: Նա իր հոդվածն սկսել էր հետեւյալ խոսքերով. «Դե, այժմ Թրամփի հերթն է ցույց տալու իր տղամարդկությունը: Նա արիությունը կունենա՞ 1915-ի Հայոց ցեղասպանությունը կոչելու «ցեղասպանություն», թե՞ ոչ: Չնչին մի խնդիր նրա նման մեկի համար, որ գոտկատեղից ներքեւ է խփում մահմեդական աշխարհում: Բայց նա շնորհավորեց խալիֆ Էրդողանին բռնատիրական հանրաքվեում հաղթանակ տանելու կապակցությամբ եւ կասկածում եմ, որ խիզախությունը կունենա այս ամիս վիրավորելու նրան ճշմարտությունն ասելով Առաջին աշխարհամարտի ժամանակ մեկուկես միլիոն քրիստոնյա հայերի սպանդի մասին»:

Ինչ վերաբերում է Էրդողանի բավականին հագեցած հաշտվողական ուղերձին, որը ենթադրում ենք, որ Վաշինգտոնի հետ պայմանավորվածության արդյունքն է, կարող ենք այն բնորոշել «ցինիկ», որովհետեւ այն ոչ մի խոստումով կամ կոնկրետ, շոշափելի գործողությամբ չէր ամրապնդված:

Արեւմուտքից Թուրքիայի օտարումը նոր կողմնակիցներ ձեռք բերելու կարիքն է առաջացրել եւ առաջին թիրախը, իհարկե, հայերն են, նրանց պետք է շահագործել եւ ապա անցնել ուրիշներին, որպեսզի քաղաքակիրթ աշխարհում ընդմիշտ մերժված չմնա: «Դեյլի Սաբահ» օրաթերթում մի լրագրող հենց այդ մասին էլ ակնարկում է՝ մեջբերելով Էրդողանի խոսքերը. «Մեր ընդհանուր ձգտումն է, որ այս երկու ժողովուրդները, որոնք դարեր շարունակ կիսել են ուրախությունն ու տխրությունը, բուժեն անցյալի վերքերը եւ ամրապնդեն կապերը ժողովուրդների միջեւ»: Ոչ մի կոնկրետ ցուցիչ չկա բնորոշելու համար այդ «ձգտումը»: Էրդողանն ինքն էր սպառնացել Թուրքիայից արտաքսել Հայաստանից արտագնա բոլոր աշխատողներին: Այդ սպառնալիքները չեն կարող նպաստել համերաշխության «ձգտումների» գոյառմանը: Նա նշում է, որ Թուրքիան քայլեր է ձեռնարկում «բուժելու անցյալի վերքերը» եւ «ամրապնդելու կապերը երկու ժողովուրդների միջեւ», բայց դրանք սոսկ դատարկ խոսքեր են, որովհետեւ Թուրքիայի զինվորականությունը պատրաստվում է միասնական զորավարժություններ անցկացնել հենց Հայաստանի սահմաններում ադրբեջանական զորքերի հետ:

Էրդողանը կարո՞ղ է առնվազն մեկ քայլ նետել, որ արդարացնի իր հայտարարությունը: Ե՞րբ եւ որտե՞ղ է նա այդ քայլերը կատարել, որ ոչ ոք տեղյակ չէ: Հայերին որեւէ փոխհատուցում տրվե՞լ է, կամ որեւէ ծրագիր եղե՞լ է պահպանելու հայկական ազգային ճարտարապետության որեւէ նմուշ Թուրքիայի հանրապետության ներկա սահմաններում:

Իսկ նրա հայտարարության ամենացինիկ հատվածը հետեւյալն է. «Մենք չենք հանդուրժի, որ մեր հայ քաղաքացիներն իրենց օտարված եւ մեկուսացված կամ երկրորդ կարգի քաղաքացիներ զգան»:

Իրականում հայերի հանդեպ թուրքական կառավարության վերաբերմունքը միշտ էլ եղել է զգացնել տալ, որ նրանք (հայերը) երկրորդ կարգի քաղաքացիներ են: Սկսենք նրանից, որ հայերի անձնագրերում «ոչ-մահմեդական» նշումն է գրանցվում: Ինչո՞ւ: Երկրորդ, 1940-ականների «ունեցվածքի հարկը» հատուկ «երկրորդ կարգի» քաղաքացիներ՝ հայերի եւ հույների համար էր նախատեսված: Երրորդ, 1955 թվի սեպտեմբերի 6-ի կառավարության հովանավորած կոտորածների թիրախը նույն այդ երկու փոքրամասնություններն էին:

Էրդողանի վարկը կվերականգնվի միայն այն ժամանակ, երբ նա հրամայի պատմության դասագրքերից հանել հայերին բնորոշող բոլոր բացասական, ատելություն սերմանող արտահայտությունները, որոնք ուսուցանվում են աշակերտներին, նրանց թվում նաեւ հայ դպրոցականներին:

Էրդողանն իր այդ հայտարարությունը բարձրաձայնեց քաղաքական նպատակահարմարությունից ելնելով: Իրականում այն մասնավորապես հայերին չէր հասցեագրված, այլ հիմնականում Արեւմուտքին՝ ցույց տալու համար, որ փոքրամասնություններին հավասարապես են վերաբերվում Թուրքիայում: Հայերը, հանդիսանալով թույլ կողմը, ստիպված են հանդուրժել եւ սպասել, որ Էրդողանի խոսքերը մի օր կապացուցվեն կոնկրետ գործողություններով:

Միայն թե, հաշվի առնելով Հայաստանի շրջափակումը Թուրքիայի կողմից, կառավարությունների խոսքակռիվը, ինչպես նաեւ Ադրբեջանին տրված ռազմական օժանդակությունը. միայն շատ պարզամիտները կարող են ինչ-որ դրական բան ակնկալել Էրդողանի հայտարարությունից: Այնպես որ, ամեն ինչ պատրանք է մնում, պատրանք, որը բխում է Անկարայի եւ Վաշինգտոնի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունից:

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

**The Armenian Mirror-Spectator**

---

# Իզաբել Մոթան Գյուլբենկյան հիմնարկության նոր նախագահ



**Հաջորդելով Արթուր Սանթոս Սիլվային, որն այդ պաշտոնը վարել էր 2012-17 թվերին, մայիսի 3-ին Իզաբել Մոթան ստանձնել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության նախագահի պաշտոնը հառաջիկա հինգ տարիների համար: Տիկին Մոթան հիմնարկության հոգաբարձու մարմնի անդամ է 1999-ից ի վեր: Ծնվել է Լիսաբոնում 1951-ին եւ մասնագիտությամբ տնտեսագետ է: Պետական եւ համալսարանական ոլորտներում ղեկավար պաշտոններ զբաղեցնելով ձեռք է բերել աշխատանքային լայն փորձառություն:**

**«ԱԶԳ-ը» շնորհավորում է Իզաբել Մոթային եւ ցանկանում արդյունավետ գործունեություն:**

---

# ՀԲԸՄ կատարողական արվեստի համերգը Միքայել Ոսկանյանի հետ



Համագործակցելով «DĹAYL պրոդաքշնզի» եւ Կոլումբիա համալսարանի «Հայ ուսանողների միության» հետ, ՀԲԸՄ-ի կատարողական արվեստի բաժինը ապրիլի 5-ին Նյու Յորքի DROM դահլիճում կազմակերպել է աննախադեպ մի համերգ, որին մասնակցել է «Միքայել Ոսկանյան եւ ընկերներ» հայկական ջազային խումբը: Թառիստ եւ երգիչ **Ոսկանյանին** ընկերակցել են **Արման Փեշտիմալճյանը** (ստեղնաշարեր), **Գուրգեն Ղազարյանը** (թավջութակ), **Մովսես Ղազարյանը** (հարվածային գործիքներ) եւ Փարիզի «Collectif Medz Bazar» խմբից՝ **Սեւանա Չաքերյանը** (ակորդեոն): Լեփ-լեցուն դահլիճի հայ եւ օտարազգի հանդիսատեսը ծափողջույններով է ողջունել համերգը: «New York Music Daily» առցանց պարբերականը դրական գնահատականով է արձագանքել համերգին:

Հ. Ծ.

AZG NEW SHABAT 1.QXD 03/05/2017 22:03 Page 5



# Ըստենց են ուզել

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

Մայիսի 2-ին ԿԸՀ-ն ստացավ ինքնաբացարկի դիմումներ՝ անցած խորհրդարանական ընտրություններին մասնակից երեք քաղաքական ուժից: Ընդհանուր առմամբ, ինքնաբացարկ է ներկայացրել 35 ընտրված պատգամավոր, բայց դա կարեւոր չէ, կարեւորն այն է, որ ինքնաբացարկի դիմում է ներկայացվել երեք քաղաքական ուժերից՝ ՀՀԿ-ից, ՀՅԴ-ից եւ Ծառուկյան դաշինքից: Բանն այն է, որ օրինակ Ծառուկյան դաշինքում ինքնաբացարկ ներկայացրած պատգամավորներից մի քանիսը տեղյակ չեն, որ իրենք ինքնաբացարկ են ներկայացրել, բայց այդ մասին ավելի ուշ:

Պատգամավորի մանդատից հրաժարվածների կոնկրետ ՀՅԴ-ի ցուցակում անակնկալներ չկան: Պատգամավոր չեն ցանկանում դառնալ դաշնակցականներից Դավիթ Լոքյանը, Լեւոն Մկրտչյանը եւ Արծվիկ Մինասյանը, իսկ չեն ցանկանում, քանի որ ցանկանում են նախարար մնալ: Եթե այս փաստին գումարենք նաեւ այն, որ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչը օրերս հայտարարեց, որ վարչապետ Կարապետյանի հետ Դաշնակցությունն ունի բնականոն հարաբերություններ, եւ այն, որ ըստ ՀՀԿ խոսնակ Շարմազանովի՝ ավարտվել են ՀՀԿ-ՀՅԴ քաղաքական խորհրդակցությունները եւ այս երկու ուժերը ընդհանուր տեսլական ունեն երկրի զարգացման հետ կապված, ապա կարելի է գրեթե վստահությամբ ասել, որ պարոնայք Լոքյանը, Մկրտչյանը եւ Մինասյանը նորից կլինեն վարչապետ Կարապետյանի կաբինետում:

Իսկ այս կաբինետի մեծամասնությունը իհարկե կլինի հանրապետական: Այս առումով շատ կարեւոր է իհարկե բառը, քանի որ առաջիկայում մեր կառավարության մեծամասնությունը հազիվ թե լինի այլ ուժից: Ինչեւէ: ՀՀԿ-ից իքնաբացարկի 9 դիմում է ստացվել: Սա արդեն ուշագրավ է, քանի որ եթե անգամ պատգամավորությունից հրաժարված 9 հանրապետականները դառնան նախարար, ինչը անհնարին է թվում, ենթադրենք Առուշանյան Առուշի պարագայում, ով մանդատից հրաժարված 9 հանրապետականներից մեկն է, ապա կառավարությունը ամբողջությամբ չի ձեւավորվի, կնշանակի կոնկրետ ՀՀԿ-ից էլի են լինելու ինքնաբացարկներ: Մի բան հաստատ է, որ նորից նախարար կլինեն մանդատից հրաժարված Արմեն Ամիրյանը եւ Վիգեն Սարգսյանը (հայտնի չէ, թե ի՞նչ նախարար), Տարոն Մարգարյանը եւս հրաժարվել է մանդատից, բայց կլինի՞ նա արդյոք նորից Երեւանի քաղաքապետ, կորոշեն երեւանցիները, երեւի կորոշեն երեւանցիները:

Հետաքրքրական է, որ մանդատից հրաժարվողների առաջին ալիքում չկա, օրինակ, Արփինե Հովհաննիսյանի անունը, ինչը նշանակում է, որ արդարադատության նախարարի հարցում ՀՀԿ-ում դեռ մտածում են, ավելի ճիշտ՝ մտածում է: Կա վարկած, որ տիկին Հովհաննիսյանը իր սրընթաց կարիերան կշարունակի ԱԺ-ում, որպես փոխնախագահի, բայց կա նաեւ վարկած, որ Արփինե Հովհաննիսյանը նորից կնշանակվի արդարադատության նախարարի պաշտոնում, մանավանդ որ, ըստ նույն վարկածի հեղինակների՝ վարչապետ Կարապետյանը ուզում է Հովհաննիսյանին տեսնել իր կաբինետում: Մի խոսքով, ՀՀԿ-ի ինքնաբացարկների առաջին ալիքը ցույց տվեց, որ Արմեն Ամիրյանն ու Վիգեն Սարգսյանը հաստատ նշանակվելու են նախարար, իսկ մյուսների հարցում դեռ քննարկելու բաներ կան, ներքին քննարկելու բաներ:

Ամենաուշագրավը Ծառուկյան դաշինքի ինքնաբացարկներն են: Նախ այն, որ այս քաղաքական ուժից լինելու են ինքնաբացարկներ՝ արդեն իսկ ուշագրավ է, քանի որ Ծառուկյանականները իշխանության մաս չեն, գոնե դե յուրե, եւ եթե հրաժարվում են պատգամավորությունից, ապա ոչինչ փոխարենը չեն ստանում: Ոչինչ՝ այսինքն պորտֆել, կամ գոնե վարչության նախագահի պաշտոն, կառավարությանը կից մի բան: Մյուս կողմից շատ հետաքրքրական է, որ Ծառուկյանականներից ինքնաբացարկ է ներկայացրել, օրինակ, դաշինքին միացած Արարատ Զուրաբյանը: Վիճե՞լ է պարոն Ծառուկյանի հետ, պարզ չէ, այլեւս ինչպես ՀՀԿ-ում են ասում՝ ընդհանուր տեսլական չունի՞ պարոն Ծառուկյանի հետ, կրկին պարզ չէ, պարոն Ծառուկյա՞նն է հասկացել, որ Զուրաբյանը չի կարող լավ պատգամավոր լինել, ասենք միշտ բացակայելու է նիստերից, քանի որ այլ բիզնես զբաղվածություններ ունի, նորից անհայտ է, թե՞ Սերժ Սարգսյանը արգելել է պրն Ծառուկյանին ընդհանրապես դաշինք ունենալ, այդ թվում ավանդական կուսակցությունների հետ... Փաստն այն է, որ Զուրաբյանը հուսախաբ է արել բոլոր այն քաղաքացիներին, որոնք գնացել են ընտրության եւ ընտրել են Ծառուկյան դաշինքին միայն նրա համար, որ այդ դաշինքին է միացել իրենց սիրելի Արարատ Զուրաբյանը, եթե իհարկե նման քաղաքացիներ կան:

Ծառուկյանականների պարագայում, սակայն, ամենաուշագրավն, ինչպես արդեն ասացի, ընտրված պատգամավորների կարծիքը հաշվի չառնելն է: Այսպես, կան մարդիկ, որոնք ընտրվել են պատգամավոր, հնարավոր է, որ անգամ հատուկ այդ առիթով ողջ բարեկամությանը հավաքել ու մի լավ քեֆ են արել, մեկ էլ այդ բարեկամությունից մեկը, որը համացանցից օգտվել գիտի, մայիսի երկուսին զանգահարել է ուրախությունը շարունակող պատգամավորին ու ասել, թե բա գիտե՞ս, ԿԸՀ-ն ասում է, որ դու հրաժարվել ես պատգամավոր աշխատելուց: Բնականաբար մարդը զարմացել է, գուցե զանգահարել է դաշինքի շտաբ, կամ, եթե կարող է եւ ունի այդ հնարավորությունները, անձամբ պարոն Ծառուկյանին, ու նրան ասել են երկու բառ՝ հա բա: Ինքն էլ, երբ իրեն մոտեցել են լրագրողները եւ հարցրել, թե պարոն ջան, ինչո՞ւ եք հրաժարվել մանդատից, պատասխանել է արդեն երեք բառով՝ «Ըստենց եմ ուզել»: Ու ստեղծվել է մի իրավիճակ, երբ պատգամավոր են դառնում ոչ թե նրանք, որոնց մենք ենք ընտրում, այլ նրանց «ըստենց» ուզելով: Զարմանալի՞ է, եթե այո, ապա բարի գալուստ Հայաստան, երեւում է վաղուց չեք եղել մայր հայրենիքում, կամ հյուր եք մեր երկրում:




Ամենացավալին, սակայն, ռեյտինգայինով ընտրվածների որոշումն է՝ հրաժարվել մանդատից, եթե իհարկե այդ որոշումները նրանք են կայացրել: Օրինակ մանդատից հրաժարվողների թվում է ամենահանրապետականներից Գալուստ Սահակյանի որդին՝ հանրապետական Արման Սահակյանը, ով, ինչպես գիտենք Աջափնյակ-Դավթաշեն-Արաբկիրում մի այլ կարգի նոկաուտի ենթարկեց կրկին հանրապետական, ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Արթուր Գեւորգյանին: Այսինքն այս շրջանների մարդիկ, գնացել ու ընտրել են պարոն Սահակյանին, անձամբ նրան եւ նրա շնորհիվ՝ ՀՀԿ-ին: Հիմա պարզվում է, որ պարոն Սահակյանն ինքը չէր ցանկանում պատգամավոր դառնալ... Ու այսպես շատերը, ոչ միայն հանրապետականներից:

Այնպես որ հաջորդ անգամ մանավանդ ռեյտինգայինով առաջադրվածներին անպայման հարցրեք՝ դուք հաստատ աշխատելո՞ւ եք պատգամավոր: Եթե պատասխանի՝ այո, ապա ճշտեք՝ հաստա՞տ, եթե կրկին դրական պատասխան տա, կարող եք հումոր անել ու ասել, օրինակ՝ իյա, իրո՞ք, բայց կարող եք հումոր չանել էլ, ամենակարեւորն այն է, որ ընտրեք այնպես, ինչպես ուզում եք, որպեսզի նրանց «ըստենց ուզելը» քաղաքական կատեգորիա չդառնա: Ավելի ճիշտ՝ այդպիսին չմնա:

# Ջազում միայն աղջիկները չեն

Քարոզարշավը, թեկուզ ավագանու, հետաքրքրական բան է: Երբեմն, ինչպես մեզ մոտ՝ շատ: Չնայած կոնկրետ Երեւանի ավագանու ընթացիկ քարոզարշավը, ըստ սենսացիաներ սիրողների, բավականին ձանձրալի է անցնում, ինտրիգի հատիկ անգամ չկա, բայց իրականում, անգամ այս քարոզարշավն անչափ հետաքրքրական է: Օրինակ, անցյալ շաբաթավերջին Երեւանի քաղաքապետարանի, հասկանալի է՝ անձամբ քաղաքապետի նախաձեռնությամբ ՀՀ եւ Արցախի սահմանամերձ զորամասերում ծառայող իրենց որդիներին այցելելու գնաց 1700 ծնող: Այսինքն, այդ օրվա լրահոսում, բացի նրանից, որ ավագանու ՀՀԿ թիմը այցելել է, ենթադրենք Էրեբունի համայնք եւ հանդիպել է ընտրողների հետ, հայտնվեցին նաեւ լուրեր, որ Տարոն Մարգարյանի նախաձեռնությամբ 1700 ծնող տեսակցել է իրենց զինվոր որդիների հետ: Պատկերացրեցի՞ք, այսինքն Էրեբունիում քարոզարշավի շրջանակներում եղել են ե՛ւ Նիկոլ Փաշինյանը, ե՛ւ Զարուհի Փոստանջյանը, տեղի ընտրողների հետ այս երկուսն էլ հանդիպել են, գուցե ավելի սրտամոտ զրուցել, բայց այ 1700 ծնող Տարոն Մարգարյանի նախաձեռնությամբ է այցելել զինվոր որդիներին, միայն Տարոն Մարգարյանն է, որ նման նախաձեռնութամբ է հանդես եկել...

Մի ուրիշ բան էլ: Անցյալ կիրակի Երեւանը ջազ էր լսում: Ճիշտ է, Կամերային երաժշտության տանն նույն օրը Հայկական ռոմանսի երեկո էր, բայց ընդհանուր առմամբ քաղաքը ջազ էր լսում, Երեւանն էլ, ինչպես գիտենք, ջազի լավագույն ավանդույթներն ունի եւ որտեղ ջազ է հնչում, այնտեղ կյանքը կանգ է առնում, կամ հակառակը՝ եռում: Մի խոսքով, կարեւորն այն է, որ այդ օրը քաղաքապետ Տարոն Մարգարյանը, բացի, հասկանալի է, քարոզարշավից, ուշադրություն, ուղերձ է հղել Ջազի օրվա հետ կապված: Ավելին՝ նա երեւանյան սրճարաններից մեկում սուրճ է խմել ջազի համաշխարհային լեգենդ, սաքսաֆոնահար Չիկո Ֆրիմանի եւ հայ ջազմեն Վահագն Հայրապետյանի հետ: Հավանաբար զրուցել էլ են, երեւի՝ ջազից, հնարավոր է հիմնականում խոսել է քաղաքապետը՝ զարմացնելով ջազմեններին երաժշտության այս ժանրում իր ունեցած տեսական գիտելիքներով եւ ոչ միայն տեսական:

Արդարության համար նկատեմ, որ ծնողներին իրենց զինվոր որդիներին տեսակցության տանելու նախաձեռնությամբ Երեւանի գործող քաղաքապետը վաղուց է հանդես գալիս, իսկ նրանից առաջ այդ բանն արել է նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը: Այսինքն՝ կոնկրետ այս նախաձեռնությունը, չնայած այս անգամ համընկել է քարոզարշավի հետ, բայց թերեւս դրա հետ այդքան էլ կապ չունի: Այլ հարց է, որ պարոն Մարգարյանը կարող էր համբերել, ենթադրենք՝ մայիսի 14-ից հետո ծնողներին տաներ իրենց զինվոր որդիների մոտ, մանավանդ, որ այդ ժամանակ եղանակն էլ ավելի տաք կլիներ: Բայց, այ ջազը... Չէ, այստեղ էլ, հանուն արդարության նկատեմ, որ Տարոն Մարգարյանը ջազի ոլորտին լրիվ անծանոթ չէ, օրինակ անցյալ տարի, հոկտեմբերին, նա ընդունեց ամերիկացի հայտնի ջազ երգչուհի Դի Դի Բրիջվոթերին, ով մեր մայրաքաղաք էր ժամանել՝ մասնակցելու «Երեւան Ջազ Ֆեստ-2016» փառատոնին: Բայց պարադոքսն այն է, որ քաղաքապետ Մարգարյանին ոչ ոք չի տեսնում երեկոյան ժամերին սրճարաններից մեկում, իր այդքան սիրելի ջազը լսելիս, կասեք տա՞նն է լսում, բայց կասե՞ք՝ ջազը տա՞նն են լսում... Իմ կարծիքով այստեղ խնդիր կա, եթե կուզեք՝ ոճի: Ոչ ոք իհարկե չի պահանջում, որ Երեւանի քաղաքապետը պարտադիր ջազի սիրահար լինի, բայց մի քիչ ծիծաղելի է, երբ ջազ չհասկացողները ներկայացվում են որպես ջազ սիրողներ: Ընդ որում ջազն այստեղ պայմանական անուն է: Վստահաբար, եթե այս օրերին Երեւանում լիներ ոչ թե ջազմեն Չիկո Ֆրիմանը, այլ ենթադրենք երգիչ Թաթուլը, քաղաքապետ Տարոն Մարգարյանը նրա հետ մի բաժակ կոֆե կխմեր, քանի որ Թաթուլի հետ հնարավոր չէ մի գավաթ սուրճ խմել: Այսինքն Տարոն Մարգարյանը ոչ թե ջազ է սիրում եւ Ֆրիմանի երկրպագուն է, այլ նրան պետք է երեւալ, իսկ միայն քարոզարշավով թող Նիկոլն ու Զարուհին երեւան:

Իսկ եթե անկեղծ լինե՞նք, չէ՞ որ եթե խնդիրը ջազը պրոպագանդելն է Երեւանում, ապա դրա կարիքը Երեւանը վաղուց չունի: Եթե անկեղծ լինենք ու Տարոն Մարգարյանին ազատենք ջազ լսելու, թերեւս, տառապանքի՞ց, թող շարունակի զինվոր որդիների մոտ տանել իրենց ծնողներին, դա նա ե՛ւ ավելի հաճույքով է անում, ե՛ւ ավելի լավ է կարողանում: Ջազը մի տեսակ իրենը չէ...

Չնայած գուցե սխալվում եմ, եւ գիտե՞ք, եթե սխալվում եմ, եւ Տարոն Մարգարյանը ջազի մեծ սիրահար է եւ լուրջ գիտակ, ապա ես միայն ուրախ եմ դրա համար: Ամեն դեպքում կոստյումով եւ փողկապով երեկոյան լավ եղանակին բացօթյա սրճարանում ջազ լսելու չեն գնում այն հասկացողները:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Ստեփանակերտ

# Թրամփի եւ միմյանց միջեւ

Մայիսի 3-ին Սոչիում տեղի է ունեցել ՌԴ եւ Թուրքիայի նախագահների եւս մեկ հանդիպում: Այն կարող էր չծրագրվել, մանավանդ Էրդողանը երեւի Պուտինի հետ քննարկումների կարիք չէր ունենա, եթե ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում գերիշխող չլիներ անորոշությունը: Ավելին, վստահություն ներշնչող տեղեկություններ կան, որ ամերիկյան զինված ուժերը պարեկություն են իրականացնում թուրք-սիրիական սահմանի որոշ հատվածներում, որպեսզի կանխեն թուրքական բանակի եւ Սիրիայի քուրդ ինքնապաշտպանական խմբերի միջեւ բախումները:

Այս ձեւակերպումն, ինչ խոսք, հույժ դիվանագիտական է: Գործնականում խոսքը վերաբերում է նրան, որ ՆԱՏՕ-ի անդամ ԱՄՆ-ը դաշինքի մյուս անդամ Թուրքիայի եւ վերջինիս կողմից ահաբեկչական ճանաչված քրդական ուժերի միջեւ ստեղծում է բուֆերային գոտի, որպեսզի Թուրքիան ձեռնպահ մնա սիրիական քրդերի դեմ պատժիչ գործողություններից: Ու թեեւ Էրդողանը քրդերին սպառնում է, թե կարող է նրանց հարվածել ցանկացած տեղում եւ պահի, իրականում Թուրքիան դեռեւս փորձում է դիվանագիտական ճանապարհով հարցերը կարգավորել, ապա նոր անցնել քրդերի դեմ լայնածավալ գործողությունների:

Երբ ԱՄՆ-ը հրթիռակոծեց Սիրիայի կառավարական ուժերի օդանավակայանը, Էրդողանը շտապեց միանշանակ աջակցություն հայտնել եւ նույնիսկ հորդորեց Վաշինգտոնին, որ ձեռնամուխ լինի Ասադին անհապաղ հեռացնելու գործողության եւ հայտնվեց անհարմար վիճակում: ԱՄՆ-ը նրա նախաձեռնությունը չպաշտպանեց, իսկ Ռուսաստանի արձագանքը հասկանալիորեն կոշտ էր: Այնուհետեւ Էրդողանն իրեն երկրորդ ինքնագործունեությունը թույլ տվեց՝ յուրովի հրապարակայնացնելով Ռուսաստանի նախագահի հետ հեռախոսազրույցի որոշ դրվագներ: Միջադեպն այնքան էր արտառոց, որ Կրեմլի մամուլի ծառայությունը հարկ համարեց հանդես գալ պաշտոնական պարզաբանումներով եւ փաստացի հերքեց Թուրքիայի նախագահին:

Երկու երկրների նախագահների հանդիպման համար սա այնքան էլ պաշտաճ ֆոն չէ, բայց իրավիճակն այնպիսին է, որ Թուրքիան եւ Ռուսաստանը հայտնվել են ԱՄՆ-ի եւ միմյանց միջեւ: Եւ որովհետեւ Վաշինգտոնը չի շտապում հանդիպման գնալ ոչ Թուրքիայի, ոչ Ռուսաստանի նախագահի հետ, թեեւ Թրամփը ցանկություն է հայտնել բանակցել անգամ Հյուսիսային Կորեայի առաջնորդի հետ, բնական է, որ Էրդողանը եւ Պուտինը պետք է մի կողմ թողնեին վերջին օրերի տհաճություններն եւ փորձեին եւս մեկ անգամ հասկանալ իրար:

Խոսքը հատկապես Սիրիայի հարցում դիրքորոշումների մասին է: Թուրքիայի դեպքում եթե ոչ ամեն ինչ, ապա հիմնական ցանկությունները, կարծես, պարզ են: Էրդողանի համար, ըստ երեւույթին, որեւիցե կարգավորում ձեռնտու է, եթե այն չի հանգեցնի Թուրքիայի հետ սահմանին քրդական ինքնավարության հռչակմանը: Մեկնաբանների մեծ մասը գտնում է, որ Թուրքիայում սահմանադրական փոփոխությունները մի նպատակ են հետապնդում՝ ուժեղ կենտրոնադիր իշխանություն հաստատելու ճանապարհով պահպանել երկրի միասնականությունը: Սիրիայում քրդական ինքնավարության ստեղծումը կարող է նախադեպ դառնալ, որպեսզի Թուրքիայի հարավ-արեւելյան քրդաբնակ շրջանները նույնպես ձգտեն անջատման:

Իր համար ճակատագրական այս հարցում Թուրքիային չի հաջողվում կայուն երաշխիքներ ստանալ ո՛չ ԱՄՆ-ից, ո՛չ Եվրոմիությունից: Ավելի վաղ միջազգային մամուլում տեսակետ էր շրջանառվել, որ Սիրիայում «Եփրատի վահան» գործողություն իրականացնելիս Թուրքիան ստացել է Ռուսաստանի համաձայնությունը: Կա՞ այդպիսի պայմանավորվածություն՝ ոչ ոք վստահաբար հաստատել կամ հերքել չի կարող: Փաստն այն է, որ Ռուսաստանը Սիրիայում Թուրքիայի ռազմական ներկայության դեմ ոչինչ չի հայտարարել: Իհարկե, պաշտոնապես Թուրքիայի այդ ծրագիրը չի դատապարտել նաեւ ԱՄՆ-ը: Բայց Վաշինգտոնն այսօր քրդերին անվանում է Մերձավոր Արեւելքում հակաահաբեկչական պայքարի դաշնակից եւ նրանց ցուցաբերում է ռազմաքաղաքական օժանդակություն:

Սոչիի հանդիպմանն Ռուսաստանի նախագահը թափանցիկ ակնարկել է, որ կա երկկողմ հարաբերություններն ամբողջ ծավալով վերականգնելու հնարավորություն: Դա Թուրքիային արված առաջարկություն է: Բանն այն է, սակայն, որ զուգահեռաբար ընթանում է ռուս-ամերիկյան ու թուրք-ամերիկյան երկխոսություն: Կողմերը նախապատրաստվում են G20-ի մակարդակով բանակցությունների:Ըստ նախնական տեղեկությունների, այդ շրջանակներում սպասվում է ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահների առաջին հանդիպումը: Բացառված չէ, որ նույն ձեւով նախապատրաստվում է նաեւ Էրդողանի եւ Թրամփի հանդիպումը:

Այս սպասողական իրավիճակում, ամենայն հավանականությամբ, Ռուսաստանը եւ Թուրքիան որեւէ արմատական քայլի չեն կարող գնալ: Տպավորությունն այն է, որ թե՛ Էրդողանը, թե՛ Պուտինը մտավախություն ունեն, որ դիմացի կողմը Թրամփի հետ կարող է գալ սկզբունքային համաձայնության: Ըստ ամենայնի, անհավանական չէ, որ իր հերթին Վաշինգտոնն էլ փորձում է Թուրքիայի «հավատարմությունը»՝ նրան մղելով Ռուսաստանի հետ հարաբերությունների: Թեեւ, իհարկե, այստեղ Ռուսաստանի եւ Թուրքիայի կշիռները տարբեր են:

Ավելի տեսանելի է թվում Վաշինգտոն-Մոսկվա մեծ պայմանավորվածության հեռանկարը: Այդ դեպքում Թուրքիան ստիպված կլինի բավարարվել այն դերակատարությամբ, որ նրա համար կսահմանեն ՆԱՏՕ-ում: Եթե, իհարկե, Էրդողանը մինչեւ վերջ «չխելագարվի» եւ չդնի դաշինքից հեռանալու հարց, ինչը խիստ անհավանական է: Որովհետեւ դա Մերձավոր Արեւելքը վերջնականապես կդարձնի դժոխք:

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
դ.գ.թ., Միջազգային անվտանգության եւ էներգետիկ աշխարհաքաղաքականության հարցերով մասնագետ

# Անվտանգություն

## (հինգերորդ մաս)

Հոդվածաշարի նախորդ համարում արդեն անդրադարձել ենք այն փաստին, որ անվտանգային ռազմավարության թիրախը, խաղաղության պայմաններում, պետք է լինի պատերազմը, եւ այն ոչ թե դեպի անխուսափելիությունը տանող ճակատագիր է, այլ կարող է դառնալ զարգացման հզոր խթան, եթե գրագետ կերպով մշակվի եւ իրականացվի անվտանգային ռազմավարությունը: Այդ մշակման հիմքում պետք է լինի թե՛ պետական, թե՛ մասնավոր ողջ համակարգի աշխատանքն անվտանգային ռեսուրսի խորացման ու նոր որակի ստեղծման համար:

Մասնավորապես պետությունը պետք է իր ողջ պետական համակարգը եւ ֆինանսական միջոցները՝ բյուջեն, ուղղի անվտանգային բաղադրիչի հզորացմանը: Այսինքն այդ հզորացումը, այդ թվում նաեւ պաշտպանական համակարգի, պետք է իրականացվի ոչ թե ռազմական, այլ ողջ պետական բյուջեի հաշվին: Եվ այդ բյուջեով նախատեսված ծախսերի տրամաբանությունը պետք է ուղղված լինի անվտանգային համակարգին: Մասնավորապես՝ թե առողջապահության եւ թե կրթության կամ ճանապարհաշինական աշխատանքները եւ դրա համար հատկացվելիք ֆինանսական միջոցները այնպես պետք է նախագծվեն եւ իրականացվեն, որ նպաստեն անվտանգային ռազմավարության տեսլականից բխող խնդիրների լուծմանը: Սա վերաբերում է թե մասնավոր բիզնեսի զարգացման խթանմանը եւ թե ՏՏ ոլորտի զարգացման տրամաբանությանը, եւ այսպես շարունակ:

Արդյունքում պաշտպանական համակարգի հզորացման համար ծախսվում է ոչ միայն դրա համար պետության կողմից նախատեսված ֆինանսական միջոցները, այլեւ ողջ պետական բյուջեն աշխատում է անվտանգային համակարգի հզորացման համար: Այս պայմաններում պաշտպանական համակարգը իսկապես կարող է դառնալ հզոր «լոկոմոտիվ» երկրի տնտեսությունն առաջ մղելու գործում:

Ի դեպ, համաշխարհային պատմության մեջ նմանատիպ օրինակները շատ են. նույն Խորհրդային Միությունը անցած դարի կեսերի տնտեսական թռիչքի համար «պարտական» է հենց պաշտպանական, իսկ ավելի կոնկրետ՝ ռազմաարդյունաբերության ոլորտին, որը լուրջ խթան հանդիսացավ երկրի առաջընթացի համար: Հետագայում այդ փորձը կրկնեցին մի շարք պետություններ եւս, մասնավորապես Իսրայելը, որը պետության զարգացման հիմքում դրեց պաշտպանական համակարգի հզորացման տեսլական: Սակայն, կարեւոր է շեշտել, որ միայն ռազմաարդյունաբերության համակարգի հզորացումը առանց անվտանգության համար կարեւոր մյուս ճյուղերի զարգացմանը դատապարտված է ձախողման:

Այստեղ թերեւս կարեւոր է անդրադառնալ մի խնդրի, որը ռազմավարական նշանակություն ունի վերը նշված համակարգի իրականացման համար: Խնդիրը Ազգային անվտանգություն հասկացության արդի մեկնաբանությունն է, որը վերջին տարիներին ակտիվորեն հրամցվում է որպես գիտական մոտեցում Հայաստանում: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի ինստիտուտի կողմից հրատարակված անվտանգային-պաշտպանական բառարանում Ազգային անվտանգությունը սահմանվում է որպես «ռեալ եւ հնարավոր արտաքին ու ներքին սպառնալիքներից անձի, ընտանիքի, հասարակության ու պետության կենսական կարեւոր շահերի պաշտպանվածության վիճակ: Ապահովվում է պետության ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ այլ կարողություններով»:

Նման մոտեցման թերությունն այն է, որ այս մեկնաբանությամբ պաշտպանվածությունը հավասարեցվում եւ ներկայացվում է որպես անվտանգության առանցքային գործոն: Արտաքին եւ ներքին վտանգներից պաշտպանված լինելը դեռ չի նշանակում անվտանգ լինել, այս բառերը՝ պաշտպանվածություն եւ անվտանգություն, հոմանիշներ չեն: Անվտանգություն հասկացության նման մեկնաբանումը խեղաթյուրում է այս հասկացությունը՝ ստեղծելով խաբկանք, թե ուժեղ պաշտպանական համակարգը անվտանգության երաշխիք է:




Վերջին տարիների զարգացումները ցույց տվեցին, որ շատ պաշտպանված պետություններ, որոնք ունեին թե՛ արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար մարտունակ բանակ եւ թե ներքին խնդիրների լուծման համար ոստիկանական ու անվտանգության այլ մարմիններ, չեն կարողանում դիմակայել անվտանգային այն մարտահրավերներին, որոնք առաջանում են համաշխարհային զարգացումների արդյունքում: Մասնավորապես նույն ԽՍՀՄ-ի փլուզումը դրա դասական օրինակն էր, երբ միջուկային զենքով զինված բանակը եւ ՊԱԿ-ի ամենահզոր համակարգը ունեցող պետությունը մասնատվեց եւ վերացավ, երբ տեղի ունեցող զարգացումների պայմաններում վերջինիս պաշտպանական համակարգը անզոր գտնվեց նոր մարտահրավերներին եւ սպառնալիքներին դիմակայելու գործում:

Նույնը տեղի է ունենում նաեւ վերջին տարիներին, երբ այսպես կոչված, «արաբական գարնան» ազդեցության տակ մեկը մյուսի հետեւից ընկնում էին պաշտպանական հզոր համակարգեր ունեցող պետությունները, անզոր գտնվելով ի հայտ եկող նոր մարտահրավերների առաջ: Այսինքն պաշտպանվածությունը դեռ չի նշանակում անվտանգություն, եթե այդ համակարգը չի զարգանում առկա ու սպասվելիք մարտահրավերներին համահունչ եւ նույնիսկ գոնե կես քայլ առաջ չանցնելով ու չկանխատեսելով նոր ծագող սպառնալիքներն ու մարտահրավերները:

Բարձր պարիսպներով ամրոցի բնակչությունը, նույնիսկ պաշարվածության պայմաններում, հնարավոր է եւ որ պաշտպանված է, սակայն անվտանգ չէ:

**Այլ կերպ ասած, ազգային անվտանգությունը ոչ թե պաշտպանվածությունն է, այլ նախ եւ առաջ համակարգային զարգացումը, որի հիմքում արտաքին ու ներքին սպառնալիքների կանխատեսումն է եւ դրանց դիմակայելու ու հաղթահարելու գրագետ ռազմավարության մշակումը:**

Զարգացում, որը պետք է համահունչ լինի առկա ու սպասվելիք ռիսկերին, սպառնալիքներին, վտանգներին ու մարտահրավերներին, որոնք անընդհատ փոփոխվում են նորանոր խնդիրներ առաջացնելով պետությունների համար: Զարգացման այս տրամաբանությունը եւ ուղղվածությունը հասկանալու համար, ինչպես եւ նշել էինք նախորդ հոդվածներում, պետք է իրականացվի անվտանգային միջավայրի անընդմեջ մոնիտորինգ եւ ըստ դրա էլ կատարվեն փոփոխություններ անվտանգային ռազմավարության համակարգում, որն էլ կնախանշի անվտանգային զարգացման ուղղությունները ու դրանց տրամաբանությունը:

Այս առումով եւս մեկ դիտարկում. ապրիլյան պատերազմից հետո Հայաստանում սկսվեց մեծ տեղ հատկացվել նոր տեխնոլոգիաներին եւ դրանց զարգացմանը, որպես պաշտպանական համակարգի հզորացման հիմք: Այդ գործընթացը սակայն իրականացվում է հախուռն եւ պարզ չէ, թե սպասվելիք ու առկա մարտահրավերների պայմաններում ինչքան արդյունավետ կլինեն դրանք: Հաշվի առնելով ներկայում գիտական մտքի զարգացման տեմպերը այսօր իսկ մշակված տեխնոլոգիաները արդեն մեկ տարի ու նույնիսկ կես տարի հետո կարող են արդեն հնացած լինել ու չհամապատասխանել այն մարտահրավերներին, որոնք անընդմաջ առաջանում են:

Այսինքն ռազմավարական նշանակություն է ստանում զարգացման արդի միտումները կանխատեսելու գործընթացը, որպեսզի տեխնոլոգիաները համապատասխանեն այդ միտումներին: Իսկ այդ միտումները հասկանալու համար հարկավոր է իրականացնել հումանիտար տեխնոլոգիաների զարգացում ու դրանց համար նոր մեթոդոլոգիաների մշակում: Սա մի գործընթաց է, որը Հայաստանում ցավոք տրտի չի իրականացվում: Այստեղ թերեւս որոշակի դրական բացառություն է կազմում Նորավանք հիմնադրամը, որը զբաղվում է այդ տեխնոլոգիաների մշակմամբ: Հումանիտար տեխնոլոգիաների զարգացումները եւ դրանց կիրառումը պետք է նախանշի արդեն անվտանգության ոլորտում տեխնիկական տեխնոլոգիաների զարգացման տրամաբանությունը եւ ուղղվածությունը:

*(վերջը՝ հաջորդիվ)*

# Փախած միլիարդատերը Եվրոպայում հովանավորներ է գտել

**ՌՈՒԴՈԼՖ ԱՎԱՆԵՍՅԱՆ**

Վերջին ժամանակներս եվրոպական քաղաքական գործիչներն ավելի հաճախ են հանդես գալիս որպես դատական համակարգի վրա ներազդելու գործիք: Իսկ ամենավտանգավորն այն է, որ նման քաղաքական գործիքները սկսում են ակտիվորեն օգտագործվել հանցագործ աշխարհի ներկայացուցիչների կողմից:

Վերջերս Ինտերպոլը ստացել էր Եվրոխորհրդարանի մի շարք պատգամավորների դիմումը ղազախստանյան նախկին բանկիր Մուխտար Աբլիազովի եւ նրա մի շարք գործակիցների հանդեպ «կարմիր շրջաբերականը» չեղյալ հայտարարելու խնդրանքով: Նամակը, որը ստորագրել էին Ջուլիա Ուորդը (S&D, Մեծ Բրիտանիա), Մարյու Լաուրիստինը (S&D, Էստոնիա), Տոմաշ Զդեխովսկին (EPP, Չեխիա) եւ Տուննե Կելամը (EPP, Էստոնիա) լոբբինգ էր արվել «Բաց երկխոսություն» հիմնադրամի կողմից, որը ֆինանսավորվում է Աբլիազովի միջոցներով: Այդ հիմնադրամը, որը ստեղծվել է Լեհաստանում 2009թ., մասնագիտանում է ժողովրդավարության հետազոտություններում հետխորհրդային տարածքի երեք երկրներում՝ Ռուսաստանում, Ղազախստանում եւ Ուկրաինայում: Զարմանալի զուգադիպությամբ, հենց այդ երեք երկրներն են ամենատուժածները Աբլիազովի խմբի հանցավոր գործողություններից եւ հետապնդում են նրա արտահանձնման խնդիրը այդ երկրներից գոնե որեւէ մեկը: Հիմնական գաղափարը, որ խորհրդարականներին է նետել «Բաց երկխոսություն» հիմնադրամն այն է, որ Աբլիազովի հետապնդումը քաղաքական բնույթ է կրում: Իբր նա հանդիսանում է Ղազախստանի գործող իշխանության քաղաքական հակառակորդը: Սակայն միանգամից մի քանի երկրների (ոչ միայն Ղազախստանի, այլեւ Ռուսաստանի, Ուկրաինայի, Մեծ Բրիտանիայի) դատական իշխանություններին հաջողվել է ապացուցել, որ ֆինանսական մեքենայություններում մեղադրանքը, որը ներկայացված է Աբլիազովին Աստանայի կողմից, ճշմարիտ է:

Դեռ 2012թ. Լոնդոնի Բարձրագույն դատարանը Աբլիազովին մեղավոր ճանաչեց ԲՏԱ Բանկին վնաս հասցնելու գործում: Ավելին, դատարանն արձանագրեց, որ «Աբլիազովը կազմակերպել է խարդախ գործարքների շարք, որոնց օգնությամբ բանկի ներդրումային միջոցները տեղափոխվել էին Բրիտանական Վիրգինյան կղզիներում գտնվող մի քանի դրածո ընկերություններ: Աբլիազովը կրում է անձնական պատասխանատվություն ներդրումների անօրինական յուրացման համար: Նա միաժամանակ մասնակից է փաստաթղթերի պատրաստմանը, որոնք կոչված էին «հետին թվով» հիմնավորելու կատարված գործարքները: Նա միաժամանակ խոստովանել է, որ մի ամբողջ շարք ընկերություններ, որոնց միջոցով իրականացվել են գործարքները, հանդիսանում էին Աբլիազովի կողմից վերահսկելի՝ Drey Associates Limited, Intefunding Facilities Limited, «ԱՄԿ-Ինվեստ» նախագծային-շինարարական ընկերություն ԲԲԸ, «ԹուրանԱլեմ Կապիտալ» ԲԲԸ, Zrl Beteiligung AG եւ այլն:

Դեռ հինգ տարի առաջ Լոնդոնի Բարձրագույն դատարանի որոշմամբ Աբլիազովին պարտավորեցվել է հատուցել ԲՏԱ Բանկի վնասը 2,1 միլիարդ դոլար չափով: Եվ դա միայն վնասի մի մասն է: Մնացած հանցագործությունների գծով Լոնդոնի Բարձրագույն դատարանը շարունակում է վարել սեփական հետաքննությունը: Ընդհանուր առմամբ Մեծ Բրիտանիայի դատարանների կողմից բացահայտվել են Աբլիազովի եւ նրա հանցավոր խմբի կողմից խաբեությամբ յուրացված ֆինանսական միջոցների փաստերը ընդհանուր առմամբ ավելի քան 4,3 միլիարդ դոլար ծավալով: Նաեւ ապացուցվել է, որ այդ գումարները ղազախստանյան ԲՏԱ բանկից դուրս են բերվել անդրազգային ցանցի միջոցով ավելի քան 1300 օֆշորային ընկերություններից աշխարհի ավելի քան տասը երկրներում: Այժմ հետաքննությունը Մեծ Բրիտանիայում շարունակվում է: Բայց հենց հինգ տարի առաջ այդպիսի որոշում կայացնելուց հետո Մեծ Բրիտանիան Աբլիազովին զրկեց փախստականի կարգավիճակից՝ նրանում տեսնելով ոչ թե փախած քաղաքական գործչի, այլ միջազգային տրամաչափի խարդախի: Ֆրանսիան նույնպես ի դեմս Աբլիազովի ճանաչեց ֆինանսական խաբեբայի եւ նույնիսկ համաձայնվեց նրան հանձնել Ռուսաստանին: Այդ մասին հրամանագիրը ստորագրեց երկրի այն ժամանակվա վարչապետ Մանուել Վալսը, 2015թ. սեպտեմբերին: Սակայն Աբլիա-



զովի գործակալների ակտիվ աշխատանքը Ֆրանսիայում եւ, դատելով Ելիսեյան պալատից եկող շշուկներից, մի շարք քաղաքական գործիչների կաշառելը, որոնք ազդեցություն ունեն Պետական խորհրդի կողմից որոշումների կայացման վրա, հանգեցրեց այն բանին, որ դեպորտացիայի գործընթացը չեղյալ հայտարարվեց: Աբլիազովին Ռուսաստանին հանձնելը չեղյալ հայտարարելու ձեւակերպումը հենց այն նույնն է՝ քաղաքական հետապնդումը: Սակայն ինչպես Ռուսաստանի, այնպես էլ այլ երկրների դատարանների կողմից ապացուցված է, որ վնասը, որը հասցրել է Աբլիազովը Ռուսաստանի Դաշնության ֆինանսական համակարգերին, գերազանցում է մի քանի միլիարդ դոլարը: Միայն մոսկովյան ԱՄՏ Բանկի միջոցով Աբլիազովը դուրս է բերել ավելի քան մի քանի միլիարդ դոլար: Սխեման զարմանալիորեն պարզ էր: ԱՄՏ Բանկը անգրավ վարկեր էր վերցնում ուրիշ բանկերից, ներառյալ ղազախստանյան ԲՏԱ Բանկը եւ Ռուսաստանի Բանկը (որը 2008թ. ԱՏՄ Բանկին տվել է 800 միլիոն դոլար անգրավ վարկ): Հետո այդ փողերը տեղափոխվում էին ամերիկյան Morgan Chase բանկ եւ տարանցիկորեն նրա միջոցով՝ դեպի American Express: Բացի դրանից, այդ միջոցներով Աբլիազովը դրածո ընկերությունների միջոցով ակտիվորեն տարբեր ակտիվներ էր գնում Ռուսաստանում, Ուկրաինայում եւ Եվրոպայում: Աբլիազովյան կայսրության կառուցվածքն իրենից ներկայացնում էր ԲՏԱ դուստր բանկերը (որոնք ղազախստանյան ԲՏԱ-ն չէր վերահսկում)՝ ԲՏԱ-Ռուսաստան, ԲՏԱ-Կազան, ԲՏԱ-Ուկրաինա, ԻՊԳ «Եվրազիա» իր մասշտաբային դեվելոփերական նախագծերով, տարբեր ակտիվներից՝ «ԿրասնոյարսկԿռայՈւգոլ» տիպի կամ Վիշնո նավահանգստից: Նկատենք, որ բոլոր այդ սխեմաները հաստատվել են հետաքննության կողմից եւ այդ հետաքննության արդյունքները ընդունվել են տարբեր երկրների դատարանների կողմից: Այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի:

Ինչ վերաբերում է Ղազախստանին, Աբլիազովի գործողություններից նա տուժել է ամենաշատը: Աբլիազովի կառույցի կողմից այդ երկրին հասցված վնասի ընդհանուր չափը գերազանցում է 7,5 միլիարդ դոլարը:

Բառացիորեն օրերս Ղազախստանում սկսվեց հանցավոր օլիգարխի եւ նրա նախկին մի շարք թոփ-մենեջերների գործով գլխավոր դատական հետաքննությունը: Հետաքննությունն ապացուցել է, որ Աբլիազովը զանգվածայնորեն ներգրավում էր փոխառություններ բանկում միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից եւ բնակչության ներդրումներ: Եվ գործնականում անմիջապես էլ բոլոր միջոցները դուրս էր բերում արտասահմանյան վարկերի տեսքով՝ իր հետ կապված ընկերություններին: Այդ սխեմաների մասին, ի միջի այլոց, պատմեցին բազմաթիվ վկաներ: Մի քանի գործակիցներ ընդունեցին իրենց մեղքը, այդ թվում ԲՏԱ Բանկի նախկին վարչության նախագահի առաջին տեղակալ Ժ. Ժարիմբետովը: Նրանք նաեւ հայտնեցին, որ հափշտակված միջոցների զգալի մասն արտասահմանում լվացվում էր բրիտանական «Իսթ Բրիջ Քեփիթլ Լիմիթեդ» ընկերության միջոցով: Այդ ընկերությունը գրանցվել էր Լոնդոնում 2003թ. եւ ուներ ներկայացուցչություն Մոսկվայում: Այն ուղղակիորեն կապված չէր Ղազախստանում փողերի հափշտակության հետ: Բայց նրա ղեկավարները հանդիսանում էին Աբլիազովի վստահելի գործընկերները: Ինչպես նշված է մեղադրական եզրակացության մեջ, «Իսթ Բրիջ Քեփիթլ Լիմիթեդ» ընկերությունը հանդես է եկել իբրեւ ներդրումային հոլդինգ բոլոր հափշտակված ակտիվների լվացման եւ նրանց կառավարման գործում: Մի քանի երկրների հասցված ապացուցված վնասի ընդհանուր չափը կազմում է մոտ 12 միլիարդ դոլար: Այդ միջոցները հանդիսանում էին նաեւ բնակչության կենսաթոշակային ներդրումներ, Ղազախստանի քաղաքացիների անձնական խնայողություններ, փոխառություններ արտասահմանյան ֆինանսական կառույցներից եւ ընկերությունների դեպոզիտային հաշիվներ, պետական մարմինների (Ղազախստանում, Ռուսաստանում եւ Ուկրաինայում) փոխառություններ: Դրա համար էլ տրամաբանական է, որ նման բարձր մակարդակի եւ միջազգային մասշտաբի ավազակին միջազգային հետախուզման են հայտարարել Ինտերպոլի միջոցով:

Եվրոպայում շարունակում են անվստահորեն նայել դեպի զարգացող աշխարհի երկրներ: Ենթադրելով, որ այնտեղ ապրիորի բացակայում են ժողովրդավարությունը եւ մարդու իրավունքները: Դրանից էլ օգտվում են խարդախները, որոնք փախչում են ԵՄ: ԵՄ-ի քաղաքական գործիչները տարբեր մոտիվներով հանդես են գալիս հանցագործների կողմում՝ նրանց անվանելով մեկ դեմոկրատներ, մեկ անմեղ տուժածներ: Ընդ որում, բուն Եվրոպայի երկրներում երբեք չէին համարձակվի արդարացնել այնպիսի խարդախների, ինչպիսին է Բեռնարդ Մեդոֆը՝ հայտարարելով, որ նրա հետապնդումը «քաղաքականապես մոտիվացված է»: Չնայած, եթե ավելի ուշադիր նայենք, Մեդոֆի եւ Աբլիազովի խարդախությունների սխեմաները շատ նման են միմյանց:

Եվրոմիության բազմաթիվ քաղաքական գործիչների դժվար է նաեւ անվանել կոռուպցիայի դեմ պայքարի մարտիկներ: Հենց թեկուզ այն պատճառով, որ նրանք նպաստում են, որ արդարադատությունից փախչեն զարգացող աշխարհի երկրների շատ կոռուպցիոներներ: Եվ դա այն դեպքում, երբ իրենց սեփական երկրներում քարոզվում է զրոյական հանդուրժողականություն կոռուպցիայի հանդեպ:

Ակնհայտ են երկակի չափորոշիչները, որոնք խրախուսվում են կա՛մ ժամանակակից աշխարհում զարգացող երկրների դերի ոչ ադեկվատ ընկալմամբ, կա՛մ «սառը պատերազմի» նոր աստիճանի տարրերով՝ ողջ հետխորհրդային տարածքի հանդեպ,կա՛մ էլ այդ նույն քաղաքական գործիչների շրջանում կոռուպցիայով:

Ինտերպոլը ստեղծվել է որպես միջազգային կազմակերպություն բոլոր երկրների հանցագործներին հայտնաբերելու եւ ձերբակալելու նպատակով: Ինտերպոլի 190 անդամ երկրներից յուրաքանչյուրն իրավունք ունի ուղղելու այսպես կոչված «կարմիր շրջաբերական», որը հարցում է պարունակում անմիջապես ձերբակալելու եւ արտահանձնելու այն անձին, ով կասկածվում է քրեական հանցագործություն կատարելու եւ այլ անդամ-պետության տարածքում գտնվելու մեջ: Եվ մեղադրել Ինտերպոլին այն բանում, որ նրա լիազորությունները «օգտագործվում են», նշանակում է չվստահել ինչպես սեփական արդարադատության համակարգին, այնպես էլ յուրաքանչյուր երկրի իրավունքին՝ պատժելու հանցագործներին եւ պաշտպանելու սեփական քաղաքացիներին: Հատկապես հանցագործներին, որոնք կազմակերպել են փողերի լվացման անդրազգային սխեմա: Ինչպես դա արել է Աբլիազովն իր գործակիցների հետ:

## Ականակիր նավը Պոլ Իգնեյշսի անունով




Վաշինգտոնից «Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ ամերիկյան նավատորմի նորագույն ուղղորդիչ հրթիռներ կրող կործանիչ ականակիր նավը (DDG 117) ապրիլի 8-ին «կնքվել» է հայազգի ադմիրալ, ամերիկյան ռազմածովային ուժերի նշանավոր հրամանատարներից մեկի՝ Պոլ Իգնեյշսի անունով: Պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել Պասկագուլայի (Միսսիսիպի) Հանտինգտոն Ինգալս նավաշինարարական կենտրոնում:

Պոլ Իգնեյշսը նախագահ Լինդոն Ջոնսոնի պաշտոնավարության ժամանակ (1967-69) եղել է նախ պաշտպանության փոխնախարար (սարքավորումների եւ մատակարարման գծով), ապա ռազմածովային ուժերի նախարար: Նրա անունը կրող կործանիչը 9.200 տոն է կշռում եւ 67-րդն է «Առլի-Բուրք» տեսակի ականակիր կործանիչների շարքում:

Անվանակոչության արարողությանը մասնակցել է Պոլ Իգնեյշսի կինը՝ Նենսին:

Հ. Ծ.

# Ինտրիգներ՝ ուղղված մոտիկ ապագային

## 1 Ինչ կարող է լինել այս բոլորի տակ

«Ծառուկյան» դաշինքի 12 անդամներն այն 23-ից, որոնց անունից ինքնաբացարկի՝ մանդատից հրաժարվելու դիմումներ էին ներկայացվել ԿԸՀ, երկրորդ անգամ դիմում գրեցին ԿԸՀ, որ չեն հրաժարվում պատգամավորական մանդատից, այսպիսով կասկածի տակ դնելով իրենց անունից ինքնաբացարկի առաջին դիմումի օրինական ծագման հարցը, եւ վեր հանելով այն տգեղ սովորույթը, որ Հայաստանի քաղաքական ուժերում եղել է ու կա՝ ցուցակներում ընդգրկելուց առաջ պատգամավորության թեկնածուի հավակնություն ունեցողից նախապես, առանց ամսաթվի, ինքնաբացարկի դիմում են վերցնում եւ հարկ եղած դեպքում նրա կամքին դեմ էլ անգամ օգտագործում: Բացի այդ՝ նաեւ անհայտ մնաց, թե այն ութը, որին մանդատ տրվեց, ո՞ւմ կազմակերպմամբ կամ դրդմամբ էին գեներացվել ( Արարատ Զուրաբյան, Սերգեյ Բագրատյան, Արթուր Մանուկյան, Նապոլեոն Ազիզյան, Խաչիկ Մանուկյան, Արտյոմ Ծառուկյան, Հարություն Ղարագյոզյան եւ Վահան Կարապետյան):

Դավադրություններ փնտրողներն ամեն ինչ տեսան դրա տակ. էլ որ՝ Ծառուկյանի դեմ է այս բոլորը, նրան հերթական ապտակն է հասցվել, կամ որ՝ հենց Ծառուկյանն է կազմակերպել՝ վերեւների գիտությամբ, հետագայում խորհրդարանում այլ գործընթացներով այս բոլորը շարունակվելու է: Կամ՝ իբր Հովիկ Աբրահամյանի կողմնակիցներն են այդ 8-ը, անգամ հասան մինչեւ Ռոբերտ Քոչարյան, նույնիսկ՝ անձնապես Սերժ Սարգսյան, Հայաստանի նախագահի պարագայում ենթադրելով, թե նրան հարկավոր է սեփական պատգամավորական կորպուս մեկ տարի հետո սկսվելիք գործընթացների համար եւ այլն: Այսպիսի մոտ 10 տեսություն մենք հաշվեցինք մամուլում: Դրանք բոլորն էլ գոյության իրավունք միգուցե ունեն, քանի որ մեր քաղաքական համակարգը, որպես այդպիսին, անձերի, նրանց ապագա գործունեության ու նկրտումների, նրանց ունեցվածքի պահպանման կամ ընդլայնման կցորդն ու գործիքն է, ու այդ տեսություններից յուրաքանչյուրը տեղավորվում է այդպիսի քաղաքական դաշտի տրամաբանության մեջ:

Մեր կողմից ավելացնենք, որ անցած աշնանը փոփոխված Ազգային ժողովի կանոնակարգով՝ խմբակցության մանդատով խորհրդարան անցած պատգամավորն ինչ- որ պահի, այո, կարող է դուրս գալ խմբակցությունից, անգամ՝ նրան խմբակցությունը կարող է հեռացնել իր կազմից, սակայն այնպիսի դրույթ, որով ասենք մեկ տասնյակ պատգամավորներ կարող են նոր խմբակցություն ձեւավորել, մենք չգտանք (սա՝ այս կամ անձի՝ իր սեփական խմբակցությունը ձեւավորելու դավադրության առումով, չնայած ոչ ֆորմալ՝ պատգամավորներն իրար մեջ կարող են պայմանավորվել քայլերը համակարգելու առումով): Իսկ որ Ծառուկյանի կամքին հակադրվելով մանդատ ստացածները, փաստորեն, այո, հակասության մեջ են լինելու «Ծառուկյան» դաշինքի ապագա խմբակցության հետ՝ դա հաստատ, անգամ նրանք կարող են քվեարկել այդ խմբակցության որոշումներին դեմ, ներկայացված չլինելով, սակայն, հանձնաժողովներում:

Համաձայնենք, որ ակնհայտորեն «Ծառուկյան» դաշինքը խորհրդարան է մտնում արդեն թուլացած եւ ութ ականով, որոնք հակադրվելով Ծառուկյանի որոշմանը՝ հազիվ թե այլեւս յուրային համարվեն: «Քաղաքական թիմում, ինչպես սպորտում, մարզիչն է որոշում՝ որ խաղացողին եւ որտեղ, ինչ դիրքում է ավելի ճիշտ նրա արդյունավետությունն օգտագործել»՝ շարմազանովյան այս ճշմարտությունը, որը, սակայն, հակասության մեջ է ընտրաքվե հասկացության բովանդակության հետ, տվյալ դեպքում ճակատագրի հեգնանքով վերաբերում է մարզիկ Ծառուկյանին, որն ըստ այդ «պանյատկաների», տվյալ դեպքում էնքան էլ լավ մարզիչ դուրս չեկավ փաստորեն:

Նաեւ նկատի ունենանք, որ եթե անգամ, կարելի է ասել՝ հերթական անգամ, Ծառուկյանի եւ նրա խորհրդարանական խմբակցությունը թուլացնելուն էր ուղղված այս բոլորը, ինչպես ենթադրություններ է անում մամուլը, ապա որքան վնաս որ Ծառուկյանին է հասել, նույնքան էլ կազմակերպողին՝ գետնին հավասարեցնելով ընտրական ինստիտուտները Հայաստանում:

Մյուս կողմից՝ եթե նկատի ունենանք «Ծառուկյան» դաշինքից մանդատը վերցնելու վերաբերյալ նոր դիմում գրած 12-ից մեկի՝ Մուշեղ Սաղաթելյանի այն ակնարկը, թե որեւէ ապստամբություն չկա՝ վարչապետ կամ նախագահ ընտրելու ժամանակ կզգաք, թե ինչ է կատարվել, Ծառուկյանն այս խաղում չկա, վերջին ռաունդը ամսի 18-ին է, դեռ ինչ-որ բաներ կլինեն, սա սկիզբն է, ապա մտմտալու բան միգուցե իրոք կա:

Այս իմաստով առաջարկում ենք ուշադրություն դարձնել իսկապես այն ականին, որ դրված է նոր Սահմանադրության մեջ, Հայաաստանի նախագահի ընտրության գլխում: Ըստ այդմ՝ նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից: Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը: Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը: Այսինքն՝ որեւէ մոնոլիտ մեկ քառորդ, տվյալ դեպքում դա անգամ կարող է լինել «Ծառուկյան» դաշինք-խմբակցությունը, կարող է առաջադրել նախագահի սեփական թեկնածու, որքան էլ Հայաստանի նախագահի ինստիտուտը 2018 թվից հետո գրավիչ չթվա ու սիմվոլիկ լիազորություններով պաշտոն լինի: Բայց ինչ իմանաս՝ էլի նախագահ է, էն էլ Հայաստանի նման երկրում, որտեղ ոչ այնքան պաշտոնը, որքան անձն է կարեւոր այդ պաշտոնում, որտեղ զանազան ինտրիգներ միշտ էլ հնարավոր են: Է, «Ծառուկյան» դաշինք-խմբակցությունը եթե չձգի մեկ քառորդի, անգամ եթե այլ խմբակցություններում թեկնածուի առումով համախոհներ ունենա, ոնց է այդ խորհրդավոր ու առայժմ ծպտյալ թեկնածուին առաջադրելու: Դե՝ վարչապետի ընտրությունն էլ խիստ մոտակա խնդիր է, ու էլի Ազգային ժողովում: Մի խոսքով առնվազն մտածելու տարբերակներից մեկն է՝ վերջին ինտրիգների շարժառիթների համատեքստում:

Իսկ ընդհանրապես՝ ոնց որ թե շեղվեցինք գլխավորից՝ ովքեր դարձան մեր նոր խորհրդարանի 101 պատգամավորները, ի վերջո՝ մեկ օր առաջ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր նիստում նրանց մանդատ հանձնեց, բա մի հայացք չնետե՞նք:

### Չշոյված հայացք

ՀՀԿ-ի պատգամավորական կորպուսին նետված հայացքը մեծ լավատեսության տեղիք չի տալիս՝ ռեյթինգային կարգով ներս անցածների մեջ են հասարակության հարգանքն ու սերը չվայելող, շատ դեպքերում՝ գոնե ԶԼՄ-ների մակարդակով սկանդալների մեջ հայտնված, սակայն ունեցվածքի առումով «խիստ ծանրակշիռ», որոշ դեպքերում անգամ՝ օդիոզ դեմքեր. ազգական, փեսա, քրոջորդի, եղբայր՝ օրենսդրական աշխատանքի տեսակետից համարյա անհուսալի անձինք: Բացառությամբ երկու-երեք անձանց, որոնցից խորհրդարանական աշխատանքի փորձ ունեցողների մեջ մի քանիսին կարելի է նշել՝ Վահրամ Բաղդասարյան, Հակոբ Հակոբյան, Կարեն Կարապետյան, Կորյուն Նահապետյան, նրանք, այո, անելիք ունեն խորհրդարանում, մի երկուսի անունն էլ փորձ չունեցողների մեջ հաճույքով կարելի է տալ՝ Ֆելիքս Ցոլակյանն օրինակ: Իսկ մնացածի մեջ կան ե՛ւ հինգ տարի խորհրդարանում նստած-լռածներ, ե՛ւ մամուլի հրապարակումների բացասական հերոսներ, ու այս առումով հազիվ թե հանրությունը հասկանա ՀՀԿ-ին, հատկապես երբ այս կուսակցությունում ընտրություններից առաջ խոսում էին վերաբեռնման մասին:

Միգուցե մի փոքր ավելի տանելի նկարագիր ունի համամասնական կարգով մանդատ ստացածների ցուցակը, ուր մոտ մեկ տասնյակ պատգամավորների համար կարելի է չամաչել ե՛ւ միջազգային ատյաններում, ե՛ւ խորհրդարանականի կերպարի տեսակետից առհասարակ: Միգուցե այդ մի տասնյակը, կամ դրանից մի փոքր ավելի թիվ ներկայացնող պատգամավորները (որոնց համար ես իրոք անձնապես ուրախ եմ) փրկում են ՀՀԿ-ի դեմքը, գումարած՝ ինքնաբացարկ ներկայացրած եւ գործադիր գործուղվելիք պրոֆեսիոնալները:

Բայց ընդհանուր առմամբ այն թարմացումը, որ հանրությանը խոստանում էր ՀՀԿ ղեկավարությունը, մեծ հաշվով չի ստացվել, իսկ կուտակված խնդիրների լուծման առումով էլ մեծ հույսեր կապել նոր խորհրդարանի հետ՝ ուտոպիա է: Ուրիշ բան, որ իրականում նոր կառավարությունն ու նոր իշխանությունը ձեւավորվելու է 2018 թվականից հետո, եւ այս խորհրդարանը շատ , թե քիչ հարմարեցված է այն անձերին, որոնց ամբիցիաները ուղերձ ունեն մեկ տարի հետոյի համար: Այնպես որ՝ սովորական անցումային խորհրդարան է, որ Աստված գիտե ինչ ուղերձ ունի ապագա ձեւավորվելիք իշխանությանը:

«Ծառուկյան» դաշինքի ռեյտինգային ցուցակով անցածների մեջ նույնպես փեսա, աներորդի շրջագիծը կա, գումարած երկու-երեք խիստ էկզոտիկ ու մամուլին «սիրելի» դեմքեր, որոնք էլի մնալու են մամուլի մշտական ուրախությունը, ու չգիտես, թե ինչու է Ծառուկյանը նրանց խորհրդարան բերել՝ կարծես ինքն իր թշնամին է: Գումարած՝ այն ընբոստ ութը, որոնք հնարավոր է, որ դառնան խմբակցության խորթ անդամները: Համամասնական ցուցակով էլ երեք-չորս հանրահայտ եւ ընդունելի գործչից այն կողմ առանձնապես խարիզմատիկ խորհրդարանականներ չեն ուրվագծվում, ասել է թե՝ խորհրդարանի եղանակը որոշող երկու մեծ խմբակցություններում որակի առումով առանձնապես մեծ փոփոխություններ չեն կատարվել, եթե չասենք, որ այնուամենայնիվ ավելի նվազ պատգամավորական թիվը, հակառակը, բացասաբար է ազդել պիտանիների եւ անպիտանների ընդհանուր տոկոսային հարաբերության վրա: Մնացածն արդեն կերեւա մայիսի 18-ին, Ազգային ժողովի առաջին նիստին:

# 96 հազար 200 աշխատատեղ. հետո՞...

**Նախքան կանցնենք բուն նյութին, խնդրում եմ մտապահեք 96 հազար 200 թիվը: Իմ առաջին աշխատավարձը ամսվա կտրվածքով կազմեց 400 դրամ: 2004-ն էր, ես ապրում էի Աբովյան քաղաքում եւ աշխատանքի ընդունվեցի քաղաքի Աբովյան հեռուստաընկերությունում՝ որպես լրագրող: Մեկ ռեպորտաժը վարձատրվում էր 200 դրամ, այդ ամիս երկու ռեպորտաժ արեցի, ստացա 400 դրամ աշխատավարձս, գնեցի մեկ տուփ սիգարետ, կարողացա, քանի որ եւս 50 դրամ մոտս ունեի:**

**Մայիսի մեկին, Աշխատավորների միջազգային օրը, երբ Փարիզում, Ստամբուլում անկարգություններ էին, իսկ Երեւանում՝ տոն, Ֆեյսբուքում սկսվեց մի ուշագրավ ֆլեշմոբ: Օգտատերերը գրում էին, թե որքա՞ն եւ ե՞րբ է եղել իրենց առաջին աշխատավարձը, եւ ի՞նչ են արել վաստակած առաջին գումարով: Կային իհարկե զավեշտալի, անգամ լպիրշ պատմություններ: Օրինակ՝ 30-ին մոտ տղամարդը 22 տարեկան Ինգայի անունից գրում էր, թե իր առաջին աշխատավարձը ստացել է մեքենայում. սեւ էր, վարձատրողն էլ չսափրված, բայց ընդհանուր առմամբ ֆեյսբուքահայերի մեծ մասի առաջին աշխատավարձի մասին լրիվ պատկերացում կազմել հնարավոր էր: Օրինակ «Առավոտ» թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը գրել էր, որ իր առաջին՝ դրամով աշխատավարձը ստացել է 1993-ին, դեկտեմբեր ամսվա համար, երբ ՀՀ նախագահի մամուլի քարտուղարն էր, աշխատավարձն էլ կազմել է 700 դրամ: Ինչեւէ...**

**Եղան շատերը, սակայն, որոնք չգրեցին իրենց առաջին աշխատավարձի մասին: Մինչդեռ շատ հետաքրքրական կլիներ իմանալ, թե ենթադրենք որքա՞ն է կազմել ՀՀ վարչապետի առաջին աշխատավարձը, կամ օրինակ քաղաքապետ Տարոն Մարգարյանը ե՞րբ է ստացել առաջին աշխատավարձը եւ որքա՞ն է այն կազմել: Ի դեպ այս երկուսը Ֆեյսբուքում բավականին ակտիվ են, հետեւաբար տեսել են, որ բոլորը գրում են իրենց առաջին աշխատավարձի մասին, բայց իրենք հարկ չեն համարել գրել: Ինչո՞ւ: Չէ, նորմալ է, որ գաղափարը նրանց ուղղակի չի հետաքրքրել, բայց չէ՞ որ նրանք ընտրել են մի ճանապարհ, երբ առաջնայինը ոչ թե այն է, թե ինչ է իրենց հետաքրքրում, այլ այն է, որ իրենք են հետաքրքրական եւ իրենց հետ, մանավանդ իրենց փողի հետ կապված ամեն բանը:**

**Բայց ամենակարեւորը՝ որեւէ միլիոնատեր չգրեց, թե ինչպե՞ս եւ ե՞րբ է վաստակել իր առաջին միլիոնը: Ես, անշուշտ, հասկանում եմ, որ շատ դեպքերում սա հաղորդագրություն կլիներ հանցագործության մասին, ինքնամատնության պես մի բան, բայց գոնե առաջին հարյուր հազարը (դոլարով) ե՞րբ եւ ամենակարեւորը ինչպե՞ս են վաստակել: Չիմացանք: Երեւի երբեք էլ չիմանանք, եթե իմացող լինեինք, մենք էլ այդ առաջին հարյուր հազարը կունենայինք, այն արագ կվերածեինք առաջին միլիոնի, հետո մի քանի միլիոնի, հետո խանութներ կկառուցեինք, եկեղեցի եւ բարեգործություն կանեինք, իհարկե:**

**Ու այս ողջ պատմության մեջ կորան-գնացին աշխատողի իրավունքները: Ոչ ոք այդ մասին չխոսեց, հավանաբար օրն աշխատանքային չէր, իսկ մարդիկ որպես կանոն Ֆեյսբուք մտնելու ազատ ժամանակ ունենում են աշխատանքի ժամերին, աշխատավայրում: Ամեն դեպքում այս հարցը, օրվա ամենակարեւոր հարցը, մոռացվեց: Մինչդեռ աշխատողի իրավունքների պաշտպանությունը հիմա ավելի լուրջ խնդիր է, քան աշխատատեղերի բացակայությունը: Վերջինն ըստ էության խնդիր էլ չէ, քանի որ մարդիկ բաժանվում են երկու խմբի՝ աշխատողների եւ չաշխատողների: Ընդ որում, աշխատանք ունենալը երկու պարագայում էլ կարեւոր չէ: Խնդիրն ուրեմն աշխատողների իրավունքների պաշտպանությունն է, ավելի ճիշտ՝ այդ իրավունքների անպաշտպան լինելը: Այս խնդիրը մեզանում ունի ե՛ւ քաղաքական պաստառ, ե՛ւ սոցիալական պաստառ, ե՛ւ անմարդկային պաստառ: Օրինակ, երբ կուսակցական մամուլում աշխատող ոչ կուսակցական լրագրողը կուսակցության ղեկավարության կողմից ընկալվում է որպես սեփական աշխատող եւ կուսակցական կարգադրություն է կատարում, ընդ որում՝ չվարձատրվող, ապա մենք գործ ունենք աշխատողի իրավունքների չպաշտպանվածության քաղաքական դեպքերից մեկի հետ: Իսկ եթե բենզալցակայանում բենզին լցնող երիտասարդ, ուսանող, գյուղացի տղային շեֆը կարգադրում է նաեւ ավտոմեքենաները լվալ, սա արդեն աշխատողի իրավունքի անմարդկային խախտում է... Ինչեւէ:**

**Հիմա, եթե հիշում եք այդ թիվը՝ 96 հազար 200-ի մասին: Հենց այսքան մարդ, պաշտոնական տվյալներով, Հայաստանում ակտիվ փնտրում է աշխատանք: Ես իհարկե գիտեմ, թե նրանք ինչու են աշխատանք փնտրում, բայց անկեղծ ասած չգիտեմ, թե ի՞նչ են փնտրելու, երբ գտնեն այդ աշխատանքը, կամ փնտրելո՞ւ են արդյոք: Հավանաբար՝ ոչ, քանի որ հարմարվելը միշտ ավելի հեշտ է փնտրելուց, առավել եւս՝ գտնելուց:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 03/05/2017 22:03 Page 9



# «Սփյուռքը եւ Հայաստանը պետք է համախմբվեն, որպեսզի Հայաստանը դառնա չքնաղ երկիր եւ հարատեւի մեր ազգը»

## *Համոզված է Ռուբեն Վարդանյանը*

**ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ**
**Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից**

Ապրիլի 24-ին «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիրներ Ռուբեն Վարդանյանն ու Նուբար Աֆեյանը Ծիծեռնակաբերդի բարձունքում ծաղիկներ խոնարհեցին՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության նահատակների:

- Այսօր հայրենակիցներիս դեմքերին վերափոխություն նկատեցի, որին, անկեղծ ասած, վաղուց էի սպասում,- լրագրողներին հայտնեց **Ռուբեն Վարդանյանն** ու հավելեց: - Հայն արդեն փորձում է փոխել իր ընկալումը՝ զոհից արժանապատիվ եւ ստեղծարար քաղաքացու: Հաջողության համար մենք պետք է առաջ նայենք եւ համախմբվենք, Սփյուռքը եւ Հայաստանը պետք է միանան եւ մեր հաջողությունը ցույց տանք բոլորին, մեր հարեւաններին, որ իրենց ուզածը չի ստացվելու, որ մենք կյանքն ենք զարգացնում, մեր լուման ենք դնում աշխարհի զարգացման մեջ եւ անում ամեն ինչ, որ աշխարհը հիշի՝ ինչ է եղել 102 տարի առաջ, նայելով մեզ՝ հասկանա, որ մենք երեք հազար տարուց ավելի պատմություն ունենք, եւ մենք այն ազգն ենք, որ աշխարհին շատ բան է տալիս եւ տալու է...

Ռուբեն Վարդանյանն այնուհետեւ նշում է, որ «Ավրորա» նախաձեռնությունն այս տարի իր գագաթնակետին կհասնի մայիսի 28-ին՝ Հանրապետության օրը: Մայիսի 28-ը մեծ խորհուրդ ունի եւ մրցանակի շնորհման արարողությունն ու ուղեկցող միջոցառումները կարժեւորեն այդ ուղին՝ մահից դեպի կյանք, սարսափից դեպի հույս, կործանումից՝ վերածնունդ...

Ռուսաստանցի ճանաչված գործարար եւ բարերար, իր պատմական Հայրենիքի նվիրյալ Ռուբեն Վարդանյանը հիրավի այսօր պայծառ անուն է մեր իրականության մեջ, եւ կարծում եմ ընթերցողին հետաքրքրական կլինի համառոտակի ծանոթանալու նրա կենսագրության ուշագրավ մանրամասներին:

Ծնվել է 1968 թ. մայիսի 25-ին Երեւանում: Միջնակարգ դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո մեկնել է Մոսկվա, սովորել Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետում եւ գերազանցությամբ ավարտել: Փորձաշրջան է անցել Իտալիայում, ավարտել է Նյու Յորքում կազմակերպված շուկաներին վերաբերող դասընթացները: Ուսանել է INSEAD-ում (Ֆրանսիա), ավարտել է Հարվարդի բիզնես դպրոցի դասընթացները, հատուկ դասընթացներ է անցել Եյլի համալսարանում ու Սթենֆորդի համալսարանի բիզնեսի բարձրագույն դպրոցում:

1992 թվականից ղեկավարել է «Տրոյկա Դիալոգ» ընկերությունը՝ զբաղեցնելով գործադիր տնօրենի, այնուհետեւ՝ նախագահի, գլխավոր գործադիր տնօրենի ու «Տրոյկա Դիալոգ» ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնները: 2002-2004 թվականներին զբաղեցրել է «Ռոսգոստրախ» ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնը:

Տարբեր ժամանակահատվածներում Ռուբեն Վարդանյանը բարձր պաշտոններ է զբաղեցրել ռուսաստանյան մի շարք հեղինակավոր կազմակերպություններում, եղել հայտնի ընկերությունների տնօրենների խորհրդի անդամ:

Նա իր ժամանակի մեծ մասը հատկացնում է բարեգործական հիմունքներով գործող ենթակառուցվածքներին: Դիլիջանում հիմնած եւ կարճ ժամանակում ճանաչման արժանացած կրթահամալիրի՝ UWC Dilijan College-ի հիմնադիրն է: Դիլիջանյան քոլեջը Արեւելյան Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների տարածքում UWC համակարգի առաջին գիշերօթիկ դպրոցն է: Այն բացվել է 2014 թ. սեպտեմբերին եւ այսօր այնտեղ սովորում է ավելի քան 70 երկրներից ժամանած եւ Հայաստանից շուրջ 200 երիտասարդ:

- Դիլիջանի դպրոցը երիտասարդների համար մեծ ճանապարհ է բացում դեպի աշխարհի լավագույն համալսարաններ,- ասում է Ռուբեն Վարդանյանն ու համոզմունք հայտնում, որ աշխարհը դեռ կխոսի այդ կրթօջախի մասին, դիլիջանյան քոլեջի շրջանավարտները ճանաչված մարդիկ կդառնան եւ իրենց խոսքը կասեն աշխարհին...

Ռուբեն Վարդանյանը «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի համահիմնադիրն է:



Կազմակերպությունն իրականացնում է երկրի զարգացմանն ուղղված երկարաժամկետ ծրագրեր: Դրանցից մեկն էլ «Տաթեւի վերածնունդ» էր, որի շրջանակներում 2010 թվականին կյանքի կոչվեց աշխարհի ամենաերկար ճոպանուղին՝ «Տաթեւերը»: Ճոպանուղին դեպի Սյունիքի բնական եւ պատմական տեսարաններ ու վայրեր տանող եւ Գինեսի ռեկորդների գրքում գրանցված աշխարհի ամենաերկար ճոպանուղին է՝ 5752 մետր օդային ճանապարհով:

2015 թվականին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Նյու Յորքում հայտարարվեց նոր համաշխարհային նախագծի՝ 100 LIVES-ի մեկնարկի մասին: Համահիմնադիրներ Ռուբեն Վարդանյանի, ամերիկահայ Նուբար Աֆեյանի եւ Նյու Յորքի Կառնեգի կորպորացիայի նախագահ Վարդան Գրիգորյանի նախաձեռնությունն ուղղված էր Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց հայ ժողովրդին փրկության ձեռք մեկնած անձանց ու կազմակերպություններին երախտագիտություն հայտնելուն, վերապրածների եւ նրանց փրկողների պատմությունները ներկայացնելուն, եւ ամենահինքնուրույն ծրագիրը՝ աշխարհի տարբեր վայրերում տառապող մարդկանց ու երեխաների օգնությանը նվիրված գործիչների հանրաճանաչման եւ օգնության:

100 LIVES նախաձեռնության շրջանակում հիմնվեց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը՝ Aurora Prize for Awakening Humanity ամենամյա մրցանակը, որը անվանվել է ի պատիվ Ավրորա Մարդիգանյանի, ով նշանակալի դեր է ունեցել Հայոց ցեղասպանության մասին աշխարհին իրազեկելու գործում՝ իր ապրած սարսափների մասին պատմելով «Հոշոտված Հայաստան» գրքում, որի հիման վրա նույնանուն ֆիլմ է նկարահանվել:

«Ավրորա» մրցանակը ամեն տարի Երեւանում շնորհվելու է այն մարդկանց, ովքեր բացառիկ ավանդ են ունեցել մարդկային կյանքեր փրկելու եւ մարդասիրական գաղափարներ տարածելու գործում: Ընտրող հանձնաժողովի համանախագահն է կինոգործիչ եւ բարերար Ջորջ Քլունին: Ընտրող հանձնաժողովի առաջին համանախագահը Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիր Էլի Վիզելն էր՝ 2015 թվականի մարտից մինչեւ իր մահը՝ 2016 թվականի հուլիս:

Հանձնաժողովի կազմում ընդգրկված են 100 LIVES նախաձեռնության համահիմնադիր Վարդան Գրիգորյանը, Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիրներ Լեյմա Գբովեն, Շիրին Էբադին, Օսկար Արիասը, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով նախկին գերագույն հանձնակատար եւ Իռլանդիայի նախկին նախագահ Մերի Ռոբինսոնը, Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի նախկին հատուկ ներկայացուցիչ Հինա Ջիլանին եւ Միջազգային ճգնաժամային խմբի պատվավոր նախագահ եւ Ավստրալիայի արտաքին գործերի նախկին նախարար Գարեթ Էվանսը...



Ռուբեն Վարդանյանն ու նրա կինը՝ Վերոնիկա Զոնաբենդը ունեն 4 երեխա: Կինը ծնունդով ՌԴ Ժուկովսկի քաղաքից է: 1990 թվականին ավարտել է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտը, աշխատել է Ավիացիոն համակարգերի գիտահետազոտական ինստիտուտում, 1993 թվականից զբաղեցրել է «Տվերունիվերսալբանկ»-ի Արտարժույթի բաժնի տնօրենի տեղակալի պաշտոնը: 1994-1995 թվականներին Վերոնիկան սովորել է Լոնդոնի Տնտեսագիտության եւ Քաղաքագիտության դպրոցում «բանկային գործ եւ ֆինանսներ» մասնագիտացմամբ: 1999 թվականից զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, Հայաստանում Դիլիջանի քոլեջի հիմնադիր-գործընկերն ու տնօրենների խորհրդի նախագահն է: Կարգավորում է Հայաստանում եւ Ռուսաստանում բարեգործական նախագծեր իրականացնող իրենց ընտանեկան հիմնադրամի գործունեությունը:

Ռուբենն ու Վերոնիկան որոշել են, որ իրենց երեխաներին մեծ ժառանգություն չեն թողնի, որպեսզի «ձերբազատեն նրանց մեծ կարողության առաջացրած խնդիրներից»: Փոխարենը՝ նրանք գումարներ կծախսեն բարեգործություն իրականացնելով...

Եվ ահա ընդամենը մի քանի օր առաջ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանն ընդունելով իր բարեգործական աստվածահաճո առաքելությունը սրտի կանչով եւ մեծագույն սիրով կատարող Ռուբեն Վարդանյանին ու նրա գործընկերներին, ասել է հետեւյալը. «Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել Ռուբեն Վարդանյանին եւ իր գործընկերներին, որ մտահոգ են Հայաստանի համար, կանոնավոր աշխատանքներ են իրականացնում մեր երկրում, եւ մենք մեր վերաբերմունքով համարժեք արձագանքով պետք է ոգեւորենք նրանց»:

Ռուբեն Վարդանյանը կարեւորել է պետության կողմից երկրի զարգացման տեսլականի մշակումը, ինչպես նաեւ պետություն-մասնավոր հատված համագործակցությանն ուղղված ծրագրերի իրականացումը: Նա նշել է, որ 2007 թ.-ից մինչ օրս իրենք Հայաստանում տարաբնույթ ծրագրերի իրականացման համար արդեն ներդրել են ավելի քան 550 միլիոն ԱՄՆ դոլար եւ նախատեսվում է առաջիկա 15 տարում շուրջ 1.3 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրումներ կատարել, որոնք լուրջ դրական ազդեցություն կունենան Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման վրա..

- Հետ նայելը հավասարազոր է պարտության,- ասում է Ռուբեն Վարդանյանը:- Հայը այսուհետեւ եւ ընդմիշտ՝ պետք է առաջ նայի, շենացնի իր երկիրն ու հզորանա: Սփյուռքը եւ Հայաստանը պետք է անպայման համախմբվեն, որպեսզի Հայաստանը դառնա չքնաղ երկիր եւ հարատեւի մեր ազգը...

Այսօր ահա այսպիսի հավատամքով է առաջ նայում հայրենիքի նվիրյալն ու մեծ ազգասերը: Առաջիկայում դեռ շատ առիթներ կունենանք լսելու նրա հայրենանվեր գործերի մասին եւ հպարտորեն արտաբերելու նրա անունը:

Ասված պահապան:

AZG NEW SHABAT 1.QXD 03/05/2017 22:03 Page 10



# Գեղեցկուհի, լրտեսուհի եւ վերջապես... հայուհի

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Նացիստական Գերմանիայի պատմության մեջ հայտնի է 1935 թվականին կատարված մի արյունոտ իրադարձություն՝ լրտեսության մեջ մեղադրվող երկու ազնվազարմ գերմանուհիների գլխատումը, որը ժամանակին հուզել է արեւմտյան հասարակությանը եւ շարունակում է հուզել այսօր էլ: Երկու տարի առաջ «Նեշընըլ ջիոգրաֆիք» հեռուստաալիքը ցուցադրել է այդ իրողության մասին լեհական վավերագրական կինոնկար, իսկ այդ պատմությունը բազմիցս արտացոլվել է 1930-ականների Գերմանիայի պատմության մութ ծալքերին, 20-րդ դարի գերմանական եւ միջազգային լրտեսությանը, գերմանական կուրտիզանուհիներին վերաբերվող գրականության մեջ:

Եվ այս գրականության մեջ մշտապես հոլովվում է նաեւ տվյալ աղմկահարույց գործին առնչված մի հայուհու անուն՝ **Կատյա Բերբերյան**: Աղբյուրները նրան վկայակոչում են կա՛մ որպես իրանցու, կա՛մ որպես ռուսի՝ նկատի առնելով քաղաքացիությունը. Բերբերյանը, ամենայն հավանականությամբ, եղել է Ռուսաստանում բնակված իրանահայուհի...

Ամեն ինչ սկսվել է այն պահից, երբ լեհական բանակի գլխավոր շտաբում ծառայող, ազնվական դասից սերած մայոր Եժի Սոսնովսկին զեղծարարության մեղադրանքով հանձնվել է ռազմական դատարանին: Հասկանալով, որ պիտի վտարվի զինվորական շարքերից՝ Սոսնովսկին, որը մայրենի լեզվի չափ տիրապետել է գերմաներենին, առաջարկել է իր լրտեսական ծառայությունները Գերմանիայում՝ հօգուտ Լեհաստանի: Առաջարկն ընդունվել է, եւ մայորը, գրպանը լցրած խոշոր գումարներով, մեկնել է Բեռլին: Որպեսզի իր բուն գործունեությունը հայտնի չդառնա, նա Բեռլինում ինքնաշարժի վաճառքի խանութ է բացել: Երիտասարդ, ճարպիկ, գեղադեմ Սոսնովսկին այստեղ կապ է հաստատել գերմանական բարձր դասի կանանց հետ ու նրանց միջոցով զինվորական կարեւոր գաղտնիքներ է կորզել: Նա ծանոթացել է Ռայխսվերում (գերմանական ռազմական կազմակերպություն) որպես մեքենագրուհի աշխատող երեք երիտասարդ գեղեցիկ կանանց՝ Բենիտա ֆոն Ֆալքենհայն-Ցոլիքոֆերի (ատենոք՝ ռազմական նախկին նախարարի կինը), Ռենատե ֆոն Նացմերի եւ Իրենե ֆոն Ենայի հետ, որոնց ձեռքի տակով էին անցնում ռազմական կարեւոր փաստաթղթերը: Սոսնովսկին իր ձեռքն է գցել նաեւ պատասխանատու պաշտոններ զբաղեցնող Լոտտա ֆոն Լեմմերին, Իզաբել ֆոն Թաուշերին եւ այլոց, որոնցից մի քանիսը, առաջին հերթին՝ Բենիտան, դարձել են նրա սիրուհիները: Կանանց գայթակղելու արվեստի մեջ վարժ Սոսնովսկին հանդիպել է նաեւ «միջազգային ճանաչում ունեցող նորաձեւության մոդել» Կատյա Բերբերյանին, զգլխիչ գեղեցկությամբ մի կնոջ, որը խորհրդավոր եւ արկածալից կյանք է վարել: Ֆրանսիացի պատմաբան, գրող Անդրե Բրիսոն իր «Նացիստական գաղտնի ծառայությունը» գրքում վկայել է, որ Բեռլինի շքեղ ընդունելություններից մեկի ընթացքում Եժի Սոսնովսկին եւ Բենիտան հանդիպել են «շենշող իրանցի Կատյա Բերբերյանին, որը եկել էր իր այդ ժամանակվա սիրեկան Յոզեֆ ֆոն Բերգի հետ: Երկու զույգերն այնքան են տարվել միմյանցով, որ գիշերն ավարտել են Սոսնովսկիի բնակարանում: Արդյունքում տեղի է ունեցել փոխանակություն. Կատյան դարձել է Սոսնովսկիի սիրուհին, Բենիտան՝ Յոզեֆ ֆոն Բերգի» (André Brissaud, Histoire du service secret nazi, 1972, p. 110): Սոսնովսկին Կատյային նվիրել է թանկարժեք հագուստներ, ավտոմեքենա եւ շքեղ առարկաներ, նրանք հաճախ հրավիրվել են Բեռլինի բարձր հասարակության, դեսպանատների ընդունելություններին: Սոսնովսկիի տրամադրած խոշոր գումարների շնորհիվ Կատյան բացել է հատուկ դերձակատուն բարձր դասի տիկնանց համար, որն իրականում լրտեսական բույն է եղել: Ի դեպ, ուսումնասիրողներից ոմանք Կատյայի անձը շփոթել են ժամանակի մեկ այլ բեռլինցի լրտեսուհու՝ իր տարփալից պարերով հայտնի Լեա Նիակոյի հետ, այդ իսկ պատճառով որոշ աղբյուրներում գրվել է, որ նա իբր եղել է պարուհի:

Որոշ ժամանակ անց Բենիտա ֆոն Ֆալքենհայնը եւ Ռենատե ֆոն Նացմերը Սոսնովսկիին հանձնել են որոշ ռազմական փաստաթղթեր, որոնց թվում՝ Լեհաստանի վրա հարձակման նախագիծը, ինչպես նաեւ ռազմական ինքնաթիռի մոտորի գծագիր...

Ամեն ինչ թերեւս այլ կերպ կընթանար, եթե մի օր Ռենատեի մայրը չփորձեր պարզել, թե որն է պատճառը, որ համեստ աշխատանքով ապրող իր դուստրը սկսել է շքեղ հագնվել ու ճոխ կյանք վարել: Այդ կասկածն առաջնորդել է գերմանական ոստիկանությանը, որն էլ շուտով բացահայտել է լրտեսությունը: Անմիջապես ձերբակալվել են Սոսնովսկին, Բենիտան, Ռենատեն եւ օրիորդ Իրենե ֆոն Ենան: Իսկ Կատյա Բերբերյանին հաջողվել է փախչել Բեռլինից:

Լրտեսների դատավարությունը սկսվել է 1934-ին: Թերթերը մշտապես գրել են, որ գործի մեջ դեր է ունեցել նաեւ «հրեշտակային գեղեցկությամբ» Կատյա Բերբերյանը: Սկսել են նրա անվան շուրջ լեգենդներ պտտվել, որ իբր նա իշխանուհի է, Կովկասի գահի (՞) վերջին հավակնորդի զարմուհին, պարուհի՝ «Սեւ հրեշտակ» բեմական անվամբ (տես, օրինակ, «The Salt Lake Tribute,» 25.11.1934): Ժամանակի հայ մամուլը եւս անդրադարձել է այդ դատավարությանը (օրինակ՝ «Հայու մահ երկու գերմանուհիներու գլխատման մէջ», «Հայրենիք» օրաթերթ, 22.03.1935): «Լրտեսներուն գլխաւոր գործակիցներէն մէկը արտակարգ գեղեցկութեամբ կին մըն է, որ կը կոչուի Քաթիա Պէրպէրեան: Կատարեալ մշուշապատ անցեալ մը ունի ռուսահայ այս կինը, որ խիստ հռչակաւոր է Պէրլինի մէջ: Քաթիա Պէրպէրեան յաջողած է անյայտանալ Պէրլինէն՝ առանց օձիքը ձեռք տալու»,- գրել է Ստամբուլի «Արեւելք» թերթը (27.02.1935): Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ գերմանական ազգային անվտանգության ծառայության ներքին հետախուզության ղեկավար Վալտեր Շելենբերգը Կատյա Բերբերյանին համոզել է իր գլուխն ազատել՝ լրտեսություն կատարելով հօգուտ Գերմանիայի ազգային անվտանգության ծառայության (Edmund L. Blandford, SS Intelligence: The Nazi Secret Service, 2000, էջ 94): Եթե այս տվյալը ճշմարիտ է, ապա Բերբերյանը թերեւս եղել է երկու տիրոջ ծառա, կամ ինչպես ընդունված է այդ ասպարեզում՝ double agent...

Դատավարությունը տեւել է մեկ տարի: Այս ընթացքում Բենիտան փորձել է ամուսնություն գրանցելով Սոսնովսկիի հետ՝ ստանալ լեհական քաղաքացիություն եւ խուսափել մահապատժից, սակայն անձամբ Ադոլֆ Հիտլերն արգելել է: Կանայք դատապարտվել են կացնահարության, իսկ Սոսնովսկին եւ Իրենեն՝ ցմահ բանտարկության: Ոստիկանությունը շատ խիստ միջոցներ է ձեռք առել՝ որեւէ դեպքի տեղի չտալու համար: 1935-ի փետրվարի 18-ի առավոտյան բանտից հանվել են երկու մահապարտ կանայք, որոնք մինչեւ վերջ պահել են իրենց սառնասրտությունը եւ ասել են. «Մենք վատ չպիտի զգանք եւ այս մարդկանց վրա այն տպավորությունը չպիտի թողնենք, որ թուլացած ենք մահվան վախի առջեւ»: Ֆրակով եւ սպիտակ ձեռնոցներով դահիճը գլխատել է նրանց (այդ ժամանակ Գերմանիայում դեռեւս գիլյոտին չի կիրառվել): Կառավարությունը չի արտոնել եկեղեցական հուղարկավորություն, այլ անմիջապես թաղել են հանգուցյալներին՝ նրանց ամենամոտիկ ազգականների (այդ թվում՝ Ռենատեի զինվորական ամուսնու) ներկայությամբ:

1936-ին գերմանական իշխանությունները Սոսնովսկիին փոխանակել են Լեհաստանում բանտարկված մի գերմանացի լրտեսի հետ: Սակայն նախկին զինվորականին հայրենիքում դատապարտել են 15 տարվա բանտարկության, հիմա էլ՝ Գերմանիայի օգտին լրտեսության մեղադրանքով: Նրա վախճանը հայտնի չէ. կարծիք կա, որ գնդակահարվել է բանտապահների կողմից: Ինչ վերաբերում է Կատյա Բերբերյանին, նա կարծես հավիտյանս անհետացել է՝ 1940 թվականից ի վեր իր անունը թողնելով գերմանական 1930-ականների վերաբերյալ տարբեր լեզուներով գրականության մեջ (Hansjurgen Koehler, Inside the Gestapo: Hitler s shadow over the world, Pallas Publishing Co. Ltd., 1940, p. 130. The Sosnowski Affair: Inquest on a Spy Bernard Newman, 1954, p. 15, 95. Sefton Delmer, Trail sinister: an autobiography, 1961, p. 213. Bernard Newman, The World of Espionage, 1962, p. 45. Sefton Delmer, Los Alemanes y yo, 1967, p. 180. Roger Gheysens, Les espions: Un panorama de l espionnage de notre temps, 1973, p. 110. André Brissaud, The Nazi Secret Service, 1974, p. 94. Raymond Ruffin, Les espionnes du XXe sie`cle, 2000, p. 134. German Sex Workers: German Courtesans and Prostitutes, German Dominatrices, German Erotic Dancers, German Erotica Writers, 2010 եւ այլն):

Կատյա Բերբերյանի հետագա կյանքի մասին տվյալները բացակայում են (մեզ չի հաջողվել անգամ գտնել նրա լուսանկարը), սակայն մեզ թույլ ենք տալիս ենթադրելու հետեւյալը:

Հայազգի ռուս արձակագիր Նինա Բերբերովան իր «Ընդգծումն իմն է» ինքնակենսագրական գրքում հիշել է, որ 1947 թվականին Փարիզում իրեն ժամանակավոր օթեւան է տվել իր ծանոթուհի Կատյան, որը Ռուսաստանում մեկ տարի եղել է իր դպրոցական դասընկերուհին: «Անձնագրով նա պարսկուհի էր, սակայն ծագումով՝ հայուհի, միայն թե սերել էր ոչ թե այն «երախտապարտ հայերից», որոնցից սերում եմ ես, այլ պարսկահայերից»: Բերբերովան նաեւ նշել է, որ Կատյան 1939 թվականին վերադարձել է Պարսկաստան, եվրոպական նորաձեւությամբ զուգել շահի ընտանիքի իգական սեռի անդամներին, իսկ պատերազմից հետո մեկնելով Փարիզ՝ դերձակատուն է բաց արել (Нина Берберова, Курсив - мой, 1996, Москва, стр. 519-520):

Գրեթե վստահ ենք, որ Պարսկաստանում ծնված, Ռուսաստանում բնակված ու Փարիզում դերձակատուն բացած այս Կատյան մե՛րթ որպես ռուս, մե՛րթ որպես պարսկուհի հիշված ու Բեռլինում դերձակատուն բացած Կատյա Բերբերյանն է՝ երբեմնի գեղեցկուհի լրտեսուհին...

***Հ.Գ.*** *- Ինձ երբեմն հարցնում են, թե որտեղից եմ հավաքում անծանոթ հայրենակիցների վերաբերյալ տեղեկությունները: Ինչպես նկատեց ընթերցողը, այս անգամ հոդվածում ներկայացրել եմ իմ «խոհանոցը»՝ հղելով գրեթե բոլոր սկզբնաղբյուրները: Հուսով եմ, որ ընթերցողը համոզվեց, որ անգամ նման փոքրածավալ ակնարկի համար հարկ է լինում կատարել մանրակրկիտ բանասիրական աշխատանք, եւ որ միշտ առաջնորդվում ենք ճշգրիտ ինֆորմացիա հաղորդելու սկզբունքով՝ հետաքրքրական նյութ գրելու համար բնավ կարիք չունենալով որեւէ բան հորինելու կամ գունազարդելու...*

# Ռուսաստան-Թուրքիա ձնհալը...

⇨1

**Չորս շրջանները ընդգրկում են Սիրիայի հյուսիսն ու հարավը, ինչպես նաեւ երկրի կենտրոնական հատվածը: Գերմանական լրատվամիջոցները հաղորդում են, որ Ռուսաստանի նախագահ Պուտինը մայիսի 3- ին իր թուրք պաշտոնակից Էրդողանի հետ Սոչիում պայմանավորվել է Սիրիայի հարցում դեէսկալացիոն գոտիների վերաբերյալ ( նույն հարցի վերաբերյալ հեռախոսազրույց է ունեցել նաեւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ ), բայց խոստովանում են նաեւ, որ դրա իրական նշանակության մասին հավելյալ մանրամասներ հայտնի չեն: Պուտինն ասել է՝ այդ գոտիներում օդուժը չի մասնակցելու, առաջիկա 6 ամսում ռազմական ակտիվություն չի լինելու:Գերմանական հեռուստատեսությունը, հիմք ընդունելով թուրքական թերթերի հրապարակումները, նշում է, որ Ռուսաստանից վերադարձին Էրդողանը հույս է հայտնել, թե Սիրիայի նման գոտեւորումը սիրիական հակամարտությունը կիսով չափ լուծելի կդարձնի: Թուրքիայի նախագահը նշել է, թե այդ գոտու մեջ են մտնում Իդլիբը, Հալեպի մի հատվածը, Հոմսի շրջանում Ալ Ռաստանը, Դամասկոսի մի հատվածը եւ մի հատված էլ Դարաայի շրջանում:**

**Գերմանացի մեր գործընկերները ընդգծում են, թե Ռուսաստանն ու Թուրքիան սիրիական քաղաքացիական պատերազմի հարցում տարբեր հետաքրքրություններ ունեն, բայց անցյալ տարվանից սերտորեն համագործակցում են՝ հրադադարի պահպանման, հակամարտության լուծման հասնելու համար: Դեկտեմբերին բանակցել են Հալեպի արեւելյան շրջանների էվակուացիայի վերաբերյալ, նաեւ՝ հրադադար ձեռք բերելու հարցում, որ շարունակում է փխրուն մնալ: Ռուսաստանն ու Թուրքիան Աստանայում համագործակցել են ընդդիմադիր խմբավորումների եւ կառավարող ուժերի միջեւ բանակցությունների ժամանակ: Իրանը Ռուսաստանի նման սատարում է Սիրիայի նախագահ Ասադին: Պաշտպանական գոտիների բաժանելն ու այնտեղ հրադադար հաստատելը չափազանց դժվար է, քանի որ ո՛չ «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպության անդամները, ո՛չ էլ իսլամական այլ խմբավորումների ներկայացուցիչներ բանակցություններում ընդգրկված չեն: Գերմանական աղբյուրները հիշեցնում են ապրիլի 17-ին տեղի ունեցած վայրագությունը, երբ Հալեպից էվակուացվող շիաները նվազագույնը 126 զոհ ունեցան:**

# ՄԵԾԱՐԱՆՔ

Մայիսի 2-ին մշակույթի հայկական ֆոնդում տեղի ունեցավ գրական միջոցառում նվիրված արձակագիր, թարգմանիչ **Հմայակ Սիրասի** ծննդյան 115 ամյակին: Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ Մշակույթի հայկական ֆոնդի նախագահ, բանաստեղծ, գեղանկարիչ **Արեւշատ Ավագյանը**: Նա ներկայացրեց Հ. Սիրասի գրական-ստեղծագործական անցած ուղին:

Հարկ է նշել, որ Մշակույթի հայկական ֆոնդում միջոցառումներ հաճախ են անցկացվում: Քննարկվում են մշակույթին առնչվող բազմաթիվ հարցեր: Միջոցառումներին իրենց մասնակցությունն են բերում բանաստեղծներ, գրականագետներ եւ մտավորականության ներկայացուցիչներ:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 03/05/2017 22:03 Page 11



# Եվրոմիությունը տեղի չի տալիս Էրդողանի ճնշմանը

## *Անկարային կոչ են անում վերադառնալ եվրոպական արժեքներին*

Մալթայում տեղի է ունեցել Եվրոմիության անդամ եւ հավակնորդ երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպում: Օրակարգի գլխավոր հարցերից մեկը եղել է Թուրքիայի անդամակցության չափանիշների կատարման խնդիրը: Այդ հարցի առթիվ լսվել է Եվրոխորհրդարանի զեկույցը, որը պատրաստել էր Կատի Պիրին: Այս կապակցությամբ ԵՄ արտաքին գործերի հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին եւ ԵՄ-ում նախագահող Մալթայի արտգործնախարար Ջորջ Վելը հրավիրել էին Թուրքիայի արտգործնախարար Մեւլութ Չավուշօղլուն:

Եվրոմիության եւ Թուրքիայի փոխհարաբերություններում ճգնաժամեր քիչ չեն եղել, բայց ներկայիս ճգնաժամը, որը ծագեց սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ ապրիլի 16-ին Թուրքիայում անցկացված հանրաքվեից հետո, ունի առանձնահատուկ բնույթ: Հանրաքվեն ընդլայնում է նախագահի լիազորությունները եւ վավերացնում անցումը խորհրդարանականից նախագահական կառավարման: Որոշ փորձագետներ այս ճգնաժամի մակարդակը համեմատում են Կիպրոսի ԵՄ անդամ դառնալուց հետո ծագած ճգնաժամի հետ: Այն ժամանակ Կիպրոսի հունական մասի իշխանությունները ԵՄ անդամ դառնալուց հետո հրաժարվեցին ՄԱԿ-ի առաջարկած կղզու վերամիավորման ծրագրից: Դա նշանակում էր, որ Թուրքիայի ԵՄ անդամ դառնալու հարցը գործնական հարթությունից տեղափոխվում է տեսական հարթություն: Անկարան համակերպվեց այդ հարվածին՝ վստահ լինելով, որ Եվրոմիությունը այնուամենայնիվ կգնահատի Մերձավոր Արեւելքում ռազմավարական կարեւոր դիրք զբաղեցնող Թուրքիային: Պատահական չէ, որ մինչեւ վերջերս Թուրքիայի նախագահ Էրդողանը հայտարարում էր, թե Եվրոմիությունը զգում է իր երկրի կարիքը:



Սակայն «Արաբական գարնան» եւ Սիրիայի հետ կապված կոնկրետ իրադարձությունները ցույց տվեցին, որ Թուրքիան սխալ հաշվարկ էր կատարել՝ ենթադրելով, թե ռազմավարական կարեւորությունը արեւմուտքցի գործընկերներին կստիպի լռելյայն ընդունել աշխարհիկ պետության փոխակերպումը նախագահական կոշտ կառավարմամբ իսլամիստական պետության: Բացի դրանից, ճգնաժամը որպես քրիստոնեական Եվրոպայի եւ մահմեդական Թուրքիայի դիմակայություն ներկայացնելու Էրդողանի փորձերը կոշտ եւ նյարդային հակազդեցություն առաջացրին Բրյուսելում: Սկզբում ԵԱՀԿ Ժողովրդավարական եւ մարդու իրավունքների գրասենյակը հայտարարեց, որ հանրաքվեն չի համապատասխանել Եվրոպայի խորհրդի չափանիշներին: Այնուհետեւ ԵԽԽՎ պատգամավորները քվեարկեցին Թուրքիայի նկատմամբ ԵՄ մշտադիտարկման նվազեցուցիչ գործընթացը վերսկսելու օգտին, ինչը կապված է այդ երկրում մարդու իրավունքների ոտնահարման եւ 2016 թ. հուլիսյան հեղաշրջման փորձից հետո արտակարգ դրության երկարաձգման հետ: Ի պատասխան՝ Անկարան սպառնաց նվազագույնի հասցնել Թուրքիայի վճարումները ԵԱՀԿ բյուջեին եւ դադարեցնել թուրք պատգամավորների մասնակցությունը այդ կազմակերպությանը: Բայց այդ սպառնալիքները չսասանեցին պաշտոնական Բրյուսելի դիրքորոշումը, որը առաջ քաշեց ԵՄ-ին ինտեգրվելու հարցում Թուրքիայի հետ բանակցությունները առհասարակ դադարեցնելու խնդիրը: Ըստ որում, ինչպես նշում է «Ռեգնում» գործակալությունը, այդ հողի վրա հենց Եվրոմիության ներսում տեղի ունեցավ պառակտում: Այսպես, Ավստրիայի արտգործնախարար **Սեբաստիան Կուրցը** ԵՄ երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը մասնակցելու համար Վալետտա ժամանելուն պես հայտարարեց եվրոպական ընկերակցությանը Թուրքիայի անդամակցության անհնարինության մասին՝ միաժամանակ նշելով, որ հարկավոր է այդ երկրի հետ շարունակել երկխոսությունը այլ հարցերի շուրջ: «Ես միշտ ասել եմ, որ Թուրքիան հեռանում է Եվրոպայից: Հանրաքվեի անցկացումը հերթական քայլը դարձավ «կարմիր գծից» անդին»,- ընդգծեց Կուրցը: Նրա խոսքերով՝ Եվրոմիությունը պետք է շարունակի Թուրքիայի հետ երկխոսությունը ուրիշ հարցերի առթիվ՝ ընդսմին նրա հետ չխոսելով անդամակցության մասին: Իր հերթին Լյուքսեմբուրգի արտգործնախարար Ժան Ասելբորնն ասաց, որ եվրոպացիների ճանաչած Թուրքիան մահացել է, եւ դրա հետ մեկտեղ դե ֆակտո վերջ է դրել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացը: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը իր հերթին հավանություն է տալիս վերոնշյալ մոտեցմանը:

Իհարկե գոյություն ունի նաեւ հակադիր կարծիք, բայց գլխավորը դա չէ: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե ներկայումս Բրյուսելը փորձում է Թուրքիայի ներսում աշխուժացնել եվրոպամետ ուժերը: Դա տեղի է ունենում մանավանդ այն բանից հետո, երբ Էրդողանը երկրի ներքին պառակտվածության պայմաններում սպառնաց ԵՄ անդամակցության հարցում վերանայել Անկարայի դիրքորոշումը: Հանրաքվեի արդյունքներում ձայների գրեթե հավասար բաշխումը վկայում է գրեթե կայուն այն միտումի գոյության մասին, որը իր մեջ թաքցնում է Եվրոպայի կողմից մեկուսացվելու վտանգ: Պատահական չէ, որ Թուրքիայի քաղաքական ասպարեզում վերստին հայտնվել է նախկին նախագահ **Աբդուլլահ Գյուլը**, ով երկրի կառավարությանը կոչ է անում սթափորեն գնահատել Թուրքիայում քաղաքական մշտադիտարկումը վերսկսելու ԵԽԽՎ որոշումը: Այդ կոչերը հարուցում են **Էրդողանի** բացասական արձագանքը: Նա հայտարարեց, թե Թուրքիան երբեք չի ընդունի լիովին քաղաքականացված այդ որոշումը:

ԵՄ արտաքին գործերի եւ պաշտպանական հարցերի հանձնակատար **Ֆեդերիկա Մոգերինին** փորձել է փրկել իրավիճակը՝ Մալթայում արտգործնախարարների հանդիպումից առաջ հայտարարելով, որ Թուրքիան մնում է Եվրոմիության գործընկերը, եւ որ ինտեգրման գործընթացը կշարունակվի: Սակայն նախարարների հանդիպումից հետո նա հայտարարեց, որ ԵՄ-Թուրքիա հարաբերություններում «ճեղքում» առայժմ չի նկատվում: Նրա խոսքերով՝ Թուրքիան հասկանում է, թե իրենից ինչ է պահանջվում, մանավանդ այնպիսի հարցերում, ինչպիսիք են մարդու իրավունքները, զանգվածային լրատվության միջոցների ազատությունը եւ միջազգային իրավունքի հարգումը: Ինքը՝ Մոգերինին դժվար թե հավատա Էրդողանի նահանջին, բայց Արեւմուտքում Էրդողանին միահեծան առաջնորդների շարքին դասելու իրողությունը նոր իմաստ կհաղորդի ինչպես Սիրիայի ճգնաժամին Թուրքիայի մասնակցության հեռանկարներին, այնպես էլ քրդական հարցին:

Ճակատամարտը շարունակվում է, եւ դրա միջանկյալ ելքը այժմ կախված է նրանից, թե Մերձավոր Արեւելքի քաոսը կճարակի՞ արդյոք Թուրքիան, թե՞ Անկարային կհաջողվի այն վերաուղղորդել դեպի Եվրոպա: Անշուշտ, կախված է նաեւ նրանից, թե Էրդողանն այսուհետեւ դեպի ուր կտանի իր երկիրը:

Պ. Ք.

ԳԱՅԱՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գերմանիա

# Հայ-գերմանական բարեկամության այգին հիմնված է




Գերմանիայի Դորթմունդ քաղաքի բուսաբանական այգում՝ «Ռոմբերգպարկում», Հայաստանն անցած տարվանից արդեն իր բաժինն ուներ: Օրեր առաջ՝ ապրիլի 20-ին, այն երրորդ եւ հիմնական ծառատունկից հետո ստացավ իր ամբողջական տեսքը: Ծառատունկին, որը տեղի ունեցավ Գերմանիայի «Հայ ակադեմիական միության» նախաձեռնությամբ, մասնակցում էին Բունդեսթագի պատգամավոր պարոն Թորստեն Հոֆմանը, Հյուսիս-Հռենոսյան երկրամասի Լանդթագի պատգամավոր տիկին Կլաուդիա Միդդենդորֆը եւ բազմաթիվ հայ եւ գերմանացի հրավիրյալներ: Ծառատունկը հատուկ ուշադրության արժանացնելով՝ իր ողջույնի խոսքն էր ուղարկել Բունդեսթագի նախագահ դոկտոր, պրոֆեսոր Նորբերտ Լամմերտը:

Այգում այս անգամ մոտ 130 նոր էնդեմիկ ծառատեսակներ տնկվեցին: Անցած տարվանից այստեղ լաբորատորիայում արմատակալման պրոցեսի մեջ էին թփուտներ, պտղատու եւ դեկորատիվ ծառեր՝ մասնավորապես տանձենի, խնձորենի, ընկուզենի, ծիրանենի, դեղձենի, թթենի, սերկեւիլի ծառեր ու նաեւ բարդի, ուռենի եւ այլն: (Անցած տարի տնկվել էին նաեւ արաքսյան կաղնի, եփրատյան բարդի, աճարենի, թխկի, լորենի, մայրի, սոսի, փշատենի, կեռասենի): Ծառերի մեծ մասը նվիրել է Երեւանի բուսաբանական այգին, իսկ բնապահպանության նախարարությունը կազմակերպիչ Գերմանիայի «Հայ ակադեմիական միությանն» այս անգամ օգնել է Հայաստանից արտահանելու հարցերում:

Միության նախագահ **Ազատ Օրդուխանյանի** հավաստմամբ, աշնանը՝ հոկտեմբերի 11-ին, տեղի կունենա հայ-գերմանական բարեկամության այգու պաշտոնական բացումը, երբ արդեն ծառերը բավականաչափ աճած, մեծացած կլինեն: Այդ ժամանակ նույնպես նախատեսվում է ծառատունկ անել: Բացմանը ներկա կլինեն նաեւ հայ մասնագետներ եւ պատասխանատու պաշտոնյաներ ՀՀ-ից: Այգում կտեղադրվի հուշաքար, որի վրա գրված կլինի, որ «Ռոմբերգպարկի» այդ հատվածը հայ-գերմանական բարեկամությանն է նվիրված:

Օրդուխանյանի գնահատմամբ, այգին Հայաստանին ճանաչում կբերի, այն ունի նաեւ տնտեսական նշանակություն: Ծառերը, որոնք լավ կընտելանան գերմանական կլիմային, հետագայում մեծ քանակությամբ Հայաստանից կգնվեն: Այժմ գերմանացի մասնագետների կողմից հայկական էնդեմիկ այդ ծառերը, թփերը եւ ծաղիկները ուսումնասիրվում են, որ բացահայտվեն դրանց բոլոր առանձնահատկությունները:

Հիշեցնենք, որ «Ռոմբերգպարկն» իր 64 հա տարածքով Գերմանիայում իր մեծությամբ առաջինն է: Իր տեսակով սա համարվում է աշխարհի չորրորդ խոշոր բուսաբանական այգին, որտեղ ներկայացված են աշխարհի գրեթե բոլոր տարածաշրջանները: Եվ ահա այս այգու 3,2 հա տարածքում այսուհետ ներկայանում է Հայաստանն իր ծառատեսակներով: Հայաստանի բուսական աշխարհը ներկայացնող բաժինը ամենամեծերից մեկն է: Տարածքով այն ավելին է, քան օրինակ՝ Արգենտինայի, Բրազիլիայի, Չինաստանի, ԱՄՆ-ի բաժինները:

Ի դեպ, «Ռոմբերգպարկը» ոչ միայն բուսաբանական այգի է, այլ նաեւ խոշոր գիտահետազոտական, կրթական կենտրոն: Այն հիմնադրվել է 1818 թ. Ռոմբերգ ընտանիքի կողմից եւ, ի տարբերություն շատ գերմանական այգիների, կցված չէ որեւէ համալսարանի: 1926-ին ընտանիքը հանձնել է այգին քաղաքին, պայմանով, որ այնտեղ պետք է տեղի ունենան մշակութային ծրագրեր: Ձեռք բերված պայմանավորվածությունն առ այսօր շարունակվում է: Բույսերն ուսումնասիրելու համար այգի են գալիս մասնագետներ ամենատարբեր վայրերից, իսկ ուսանողներն ու աշակերտներն էլ դասեր ու գործնական պարապմունքներ են անում: Նմանատիպ հնարավորություն ունեն նաեւ հայ մասնագետները, որի մասին արդեն կա ձեռք բերված պայմանավորվածություն:



## Հակոբ Ծուլիկյանը դարձավ 75 տարեկան




«**Ազգ**»ի հիմնադիր կազմի անդամ, անգլերեն լեզվի հրաշալի մասնագետ, թարգմանիչ, բազմավաստակ դասախոս եւ պարզապես լավ մարդ Հակոբ Ծուլիկյանը դարձավ 75 տարեկան: Երեք օր առաջ «Ազգ»ի խմբագրատանը նշելով 26 տարվա աշխատակցի ադամանդյա հոբելյանը, գործընկերները հատկապես ընդգծեցին նրա համեստությունը, պարտաճանաչությունը, միշտ հարգալից վերաբերումը գործընկերների հանդեպ եւ անգամ այն տարիները, երբ նա բազմաժխոր խմբագրատան մեջ սիրահոժար` անգլերեն լեզվի դասեր էր տալիս մեր թղթակիցներին:

Խմբագրության, ինչպես նաեւ բազմահազար ընթերցողների անունից խորին շնորհակալություններ ենք հայտնում պարոն Հակոբ Ծուլիկյանին իր հոդվածների եւ հրաշալի թարգմանությունների համար, որոնք սփռված են մեր թերթի էջերում` ընթերցողական մեծ հաճույք պատճառելով բոլորիս:

Առողջ եւ արգասաբեր շատ տարիներ ենք մաղթում սիրելի Հոբելյարին:

«ԱԶԳ»

## ՎիվաՍել-ՄՏՍ-ը հյուրընկալել է «Արեգնազան» դպրոցի աշակերտներին

Դպրոցի ավագ դասարանների աշակերտների շրջանում ապագա մասնագիտության ընտրությունն ամենակարեւոր հարցերից մեկն է: Տեղեկատվական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի մասնագիտությունները, ի թիվս այլ մասնագիտությունների, նույնպես պատանիների ուշադրության կենտրոնում են: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատոր ՎիվաՍել-ՄՏՍ-ի դռները մշտապես բաց են դպրոցականների առջեւ` մի շարք մասնագիտությունների վերաբերյալ պատկերացում կազմելու, կողմնորոշվելու հարցում նրանց առավելագույնս օգտակար լինելու նպատակով: Ընկերությունը պարբերաբար կազմակերպում է «Բաց դռների օրեր»` ավագ դպրոցի սաների, ինչպես նաեւ ուսանողների համար:



Այս անգամ ՎիվաՍել-ՄՏՍ-ը հյուրընկալել էր Երեւանի «Արեգնազան» կրթահամալիրում սովորող 21 տասերորդ դասարանցիների, ինչպես նաեւ նրանց դասղեկներ` Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով փորձագետ Սամվել Մարտիրոսյանին եւ Գայանե Դաշտոյանին: ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանն** «Արեգնազանի» սաներին հակիրճ ներկայացրել է ընկերության պատմությունը, առաքելությունն ու գործունեության հիմնական ուղղությունները: Ռալֆ Յիրիկյանը խոսել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի արժեհամակարգի, կորպորատիվ կառավարման մշակույթի կարեւորության եւ առանձնահատկությունների մասին` որպես նորարարության նախապայմաններ: ՎիվաՍել-ՄՏՍ-ի տնօրենը պատանիներին ներկայացրել է կորպորատիվ պատասխանատվության սկզբունքները, այդ ուղղությամբ ընկերության իրականացրած աշխատանքներն ու սոցիալական ներդրումների առանցքային ծրագրերը: Ուսանողները ծանոթացել են ընկերության բիզնես-կառավարման մոդելին, ու նաեւ` շարժական կապի տեխնոլոգիաների հիմունքներին: Ընկերության գլխամասային գրասենյակում կազմակերպվել է շրջայց, որի ընթացքում տասներորդ դասարանցիներն այցելել են ընկերության գործառնական հիմնական կենտրոններ: Ռալֆ Յիրիկյանի հետ դպրոցականների հանդիպումն ավարտվել է հարց ու պատասխանով:

«ՏՀՏ-ն դինամիկ զարգացող ոլորտ է: Այս ոլորտը ներառում է մի շարք նեղ մասնագիտական ենթաոլորտներ, որտեղ աշխատելու համար անհրաժեշտ են կրթություն, գիտելիքներ եւ ամենակարեւորը` հետեւողականություն ու ստեղծագործական միտք: ՎիվաՍել-ՄՏՍ-ում ներգրավված են լավագույն մասնագետները: Իսկ լավագույնը լինելը պահանջում է ոչ միայն կրթություն եւ գիտելիք, այլեւ` շարունակական աշխատանք` հմտություններն անընդհատ կատարելագործելու եւ ընկերության կողմից սահմանված թիրախներին հասնելու միջոցով», - ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

«Արեգնազան» կրթահամալիրը գործում է 1994 թ.-ից եւ Հայաստանի առաջին եւ միակ վալդորֆյան դպրոցն է: Ներդաշնակ զարգացումը վալդորֆյան մանկավարժության հիմնական սկզբունքն է, որի նպատակը երեխայի տարաբնույթ առանձնահատկություններն ու մարդկային որակները հնարավորինս համաչափ ու տարիքային-հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան զարգացնելն է: Մոտեցումն ուղղված է երեխային զարգացման ավելի լայն հնարավորություններ ընձեռելուն:

Վալդորֆյան դպրոցների թիվն աշխարհում անցել է 1000-ից` բոլոր մայրցամաքներում: Այս դպրոցներն առանձնապես տարածված են Եվրոպայի գերմանալեզու երկրներում, Արեւմտյան եւ Արեւելյան Եվրոպայում, ԱՄՆ-ում եւ Կանադայում, Հարավային Ամերիկայում: Վալդորֆյան դպրոցներ են գործում նաեւ Իսրայելում, Ճապոնիայում եւ Եգիպտոսում: Բոլորը դպրոցները պետական արտոնագրեր ունեն, հիմնական դպրոցների ավարտական վկայականներն ու վկայագրերը ընդունվում են տվյալ երկրներում:

## Արա Աբրահամյանը այցի էր եկել բարեգործական ճաշարան

Մայիսի 1-ին Երեւանի «Արաբկիր» շրջանի «Արշավիր եւ Պայծառ Աբրահամյաններ հիմնադրամ» բարեգործական ճաշարանի անդամները եւ աշխատակազմը տոնական տրամադրության մեջ էին: Նրանք անհամբերությամբ սպասում էին ճաշարանի բարեգործին` ռուս եւ հայ ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ դարձած Արա Աբրահամյանին, որ եկավ նրանց այցի: Հնչում էր հայկական հուզիչ, ոգեւորող երաժշտությունը: Արա Աբրահամյանը պատառ կտրեց ավանդական աղուհացից եւ հյուրերի հետ միասին նստեց հացի: Տոնական առատ ու գեղեցիկ զարդարված սեղանները եւ պատերին փակցված լուսանկարները հիշեցնում էին, երբ 2002 թ.ին Արա Աբրահամյանը կտրեց կարմիր ժապավենը եւ բարի գալուստ մաղթեց ճաշարանի այցելուներին: Ճաշարանն այսօր 15 տարեկան է, եւ բարեգործը կրկին շարունակում է հովանավորել այն: Ջերմ, իմաստալից խոսքեր ասացին նրա հասցեին: Արաբկիր շրջանի ղեկավար` Հ. Վարդանյանի կողմից պատվոգիր հանձնվեց նրան: Ջերմ խոսք ասաց նաեւ Արկադի Ղուկասյանը: Այնուհետեւ ելույթ ունեցավ Արա Աբրահամյանը: Նա իր գոհունակությունը հայտնեց ճաշարանի տնօրեն Բագրատ Ասատրյանին եւ բոլոր ներկաներին: Բարեմաղթանքի խոսքեր ասացին նաեւ մյուս հյուրերը:

Շարունակվում էր երգն ու երաժշտությունը, մարդիկ պարում էին, խանդավառությամբ սրտի խոսքեր ասում, ասմունքում իրենց գրած ստեղծագործությունները նվիրված բարեգործին: Անչափ հաճելի էր մթնոլորտը: Արա Աբրահամյանը լսում էր բոլորի հուզող հարցերը եւ խոստանում օգնել նրանց: Բարձր տրամադրությունը գնալով բարձրանում էր: Մարդիկ չէին ուզում հրաժեշտ տալ:

Գույնզգույն ծաղկեփնջերի եւ ծափողջույնների ու երաժշտության ուղեկցությամբ Արա Աբրահամյանը եւ նրա հետ եկած հյուրերը դուրս եկան սրահից: Օրվա խնդությունը շարունակվում էր եւ սրահը թվում էր Աբրահամյանների հայրենի օջախ, որն իր գիրկն էր բոլորել սոցիալապես անապահով մարդկանց եւ դարձել մի հուսալի հենարան:

ՍԻՐԱՆՈՒՇ ՄՈՍՈՅԱՆ

## ՎիվաՍել-ՄՏՍ. վեբ հոսթինգի ծառայություն` IPv6 տարբերակի հիման վրա

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատոր ՎիվաՍել-ՄՏՍ-ը հերթական կարեւոր քայլն է կատարել համացանցի հետ կապված ծառայություններն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Ընկերությունն իր վեբ հոսթինգի ծառայություններից օգտվողներին այդ ծառայություններն այսուհետ նաեւ տրամադրում է ինտերնետային արձանագրության նոր` IPv6 տարբերակի հիման վրա:

Վեբ հոսթինգի ծառայությունը կազմակերպություններին եւ անհատներին թույլ է տալիս կայքը կամ կայքէջը հասանելի դարձնել համացանցում` տեղակայելով դրանք սերվերների վրա: Ինտերնետ արձանագրության IPv6 տարբերակի հիման վրա գործող կայքերը կշարունակեն աշխատել նաեւ IPv4 արձանագրություններով: Տվյալների փոխանակման ծավալների շարունակական աճը հաշվի առնելով` ՎիվաՍել-ՄՏՍ-ը ձգտում է առավել մեծ հնարավորություններ ընձեռել վեբ հոսթինգի ծառայություններից օգտվող իր` կորպորատիվ եւ անհատ բաժանորդներին` հաշվի առնելով այն, որ 1981-ից գործող IPv4 արձանագրության հասցեներն արդեն սպառված են եւ IPv6 տարբերակի հիման վրա գործելը խթանում է տվյալների փոխանցման բոլոր ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի փաստացի աճը` առանց սահմանափակման:

Վեբ հոսթինգի ծառայությունից բացի` ՎիվաՍել-ՄՏՍ-ը նաեւ առաջարկում է ամպային (cloud) լուծումներ, ինչպես նաեւ դոմենների գրանցում` .AM եւ .հայ տիրույթներում:

«ՎիվաՍել-ՄՏՍ-ը ոչ միայն ձայնային եւ 3G/4G ցանցերում տվյալների փոխանցման ծառայություններ մատուցող առաջատար ընկերություն է, այլեւ հեռահաղորդակցության ոլորտում համալիր լուծումների առաջատար: Վեբ հոսթինգի, դոմենների գրանցման եւ ամպային ծառայություններ, բջջային հավելվածներ, բջջային եւ առցանց վճարումներ, ինչպես նաեւ` IP հեռուստատեսության ու հեռախոսակապի, եւ ֆիքսված ինտերնետի ծառայություններ. առաջ ենք շարժվում բոլոր այս ուղղություններով եւ նոր անակնկալները դեռ առջեւում են», - ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 04 Ա N 047261, տրուած` 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 4.5.2017, գինը` 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: